կին ընդառաջ մեր և գարձուցին զմեզ
յերեսաց արածանու: Ոմանք յին
քեանց յառաջ գնացեալ մտին 'ի քա
ղաքն. և ոմանք ընդ մեզ երթային:
Եբրև հեռացաք 'ի գետոյն իբր ձիոյ
արշաւանօք երկու կամ երեք, և մեր
ձեցաք 'ի փոքր ձորակն, և կամեցաք
անցանել և գնալ 'ի տեղի մեհենիցն,
քանզի անդ իսկ էր խորհեալ գնել
զմնացեալ նշխարսն. ջորիք կառացն
ոչ կարացին անցանել ընդ ձորակն:
Յայնժամ հրեշտակ տն արգել ըզ
սբն գրիգոր ասելով՝ հաճեցաւ տր
բնակիլ սրբոցդ 'ի տեղւոջդ յայդմիկ.
և վասն ցուցանելոյ 'ի հեռագոյն տե
ղւոյ անտի զզօրութիւն այ կենդանւոյ

սքանչելեացն՝ անդէն զձեռն 'ի գործ
արկեալ շինմածոյ եկեղեցւոյ։
Եւ նոյն օրինակաւ կազմեցաք 'ի գի
շերի զտեղի նշխարացն. և եդաք ըզ
նոսա 'ի քարեայ տապանի իբրև առ
նաչափ. և զերկուց վկայիցն մերձ
առ դուռն՝ յաջ կողմն եկեղեցւոյն. և
զմիւս ակն լուսոյ՝ դնէր 'ի տապանին,
յաղագս միշտ լուսոյն զոր ունէր։
Եւ զորս եդաքն՝ այս են. զաթանա
գինէին զհասարակն. և զկարապետին
սրբոյ զերկուս բարձսն ձախակող
մեան. և զերկուս սրունսն. և մասն
ինչ յոսկերաց ողինն։ Իսկ զայլսն 'ի
կեսարիա առին իւրեանց մասն. զեր
կուս ոտսն և զահեակ բոյթն և
զաջ ձեռն մինչև ցարմուկն։
Ը'րդ՝ իբրև եդաք 'ի ներքս 'ի տա
պանն խորագոյն ըստ չափոյ նշխա
րացն որպէս զիննակնեան տեղեացն.
նոյնպէս ծունր կրկնեալ սրբոյն զրի
գորի մեօք հանդերձ՝ զնոյն աղօթս
մատուցանէր առ ա̅ծ, զի մի ոք յան

դըգնիցի հանել զնոսա։ Եւ նոյնպէս
եկն ձայն յերկնից թէ զոր խնդրե
ցերն եղիցի. և ոչ ոք իցէ որ հանիցէ
զդոսա առ 'ի գտանել զոր եդեալ ես։
և զայս ասացեալ՝ խաղաղացաւ տե
ղին 'ի մէնջ. և յայտնի եղև փափագո
ղացն նշանաւ բևեռացն։ Բ՛րդ՝ որ
զկնի այսոցիկ է՝ թողաք զայն այլ պատ
մագրի. մինչև դառնայ դարձեալ
պատմութիւնս 'ի տարօն. զի որպէս
զայլ տեղեաց չէ ինչ գրեալ, նոյնպէս
և զիմս չիշխէ ոք գրել. զի
թագաւորաց ժամա
նակագիրն է։
Բյս Պատճէն Բռաջին.
Պատերազմին է։

Պատճէն Երկրորդ վ՚ն Պատերազ
մին որ յարձանայ։ 13

✠

Արդ՝ մինչ դեռ տրդատ և ս՚բն
գրիգոր կամէին անցանել և
գնալ առ կոստանդիա
նոս թագաւորն՝ եկեալ հասին ՚ի գա
ւառն ապահունեաց՚ի քաղաքագեօղն
մանծկերտ։ Լ՝ քքայն հիւսիսոյ զօրս
գումարեալ եկն՚ի վերայ աշխարհին
վրաց, և փս խստական արար զիշխան
ն՚ր և եբեր մինչև՚ի կարնոյ քաղաքն.
և զերկիրն գերի վարել տարան իբրև
ոգիս քառասուն և ութ հազար։
Լ՚ւ իբրև էհաս պատգամաւորն վր
ր՚ց իշխանին առ թագաւորն տրդատ.
և խնդրեց՚ի նմանէ զօրս յօգնականու
թ՚ի իւր. և ետ թ՚գրն տրդատ ՚լ՚ռ՚ զօրս
՚ի ձեռն ապահունեց, և առաքեց յօգ
նութ՚ի իշխանին վրաց։ Որք երթեալ
յամեցին յամսօրեայ ճանապարհ. որք
և զսակաւ մասն գերելոց՝ դարձու

հե ց ն

ցին. և երեք իշխան ըմբռնեցին և ա-
ծին. և կողմնապահ թողել տեղւոյն՝
դարձան ինքեանք առ թագաւորն ։
Իսկ ես աղաչեցի զՄբն գրիգոր գնալ
'ի վանս իմ զոր հիմնարկեաց յանուն
սրբոյ կարապետին. իսկ և թագաւորն
յանձին կալաւ գալ 'ի տեսութի՞ տե-
ղեացն զոր հիմնարկեաց։ Եւ ելեալ
յաշտից տեղեացն գնացաք 'ի լեառնա-
կողմն՝ և եկեալ բանակեցաք 'ի գլուխ
արձանին, վասն ընդարձակութե՞
վայրացն ։
Եւ իբրև եկաք յիննակնեան տեղին
հանդերձ թագաւորաւն, խնդիր ա-
րարաք սրբոյն անտօնի և կրօնիդեայ։
Իսկ պաշտօնեայքն ասեն՝ այս ամմի է
որ ոչ տեսանեմք զնոսա. և տրտմե-
ցաւ թագաւորն յոյժ. զի 'ի վաղնջուց
ցանկայր տեսանել զնոսա։ Եւ Մբն
գրիգոր առաքեաց խնդրակս զաղ-
բիանոս եպիսկոպոսն հանդերձ եր-
կու սարկաւագօք. տըւեալ նոցա
խրատս զայս. ընդ առաւօտն ելանեն

հզ նո

նոքա ասէ յանտառէն 'ի բլուր ուրեք.
կացէք դուք անդ զգոյշ, զի մի՛ զձեզ
տեսեալ փախիցեն ։ Որք երթեալ՝
զաւուրս ՊԸ ՃՋ կարացին տեսանել.
իսկ 'ի լուսանալ աւուրն հինգերորդի
լրւան զձայն սաղմոսերգութեան նոցա,
զի գային յանտառէն յարևմտից կող
մանէն 'ի քաղցրահամ աղբերէն. և ե
կեալ ելին 'ի բլուրն արևելական տե
ղւոյն յարարոցն դեմետրեայ. զոր կո
չեմք յարու բլուր. զի անդ՝ իսկ էին
դարափորք խորոց նոցա ։ Եւ ելեալ
'ի գլուխ բլրին՝ սկսան սաղմոսել այս
պէս. լսելի՛ արա ինձ տ̄ր յառաւօտու
զողորմութիւնս քո ։ Եւ աղբիանոս
ասէ, հոգի քո բարի՛ առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ ։ Եւ աղօթեալ
անդ անտօն՝ ասէ ցաղբիանոս՝ բարի՛
եկիր ճանապարհ խաղաղութեան ։ և նա
ասէ, բարեւոք գտի զձեզ օթևանք
հոգւոյն սրբոյ և ճրագունք լուսոյ ։
և աւետիս ձեզ, զի ՍԲՆ գրիգոր և
տրդատիոս՝ 'ի բնակութիւնս ձեր ե

կեալեն և յոյժ խնդրեն զձեզ։
Եւ նոքա ասեն, և ձեզ աւետիս. զի
սատանայ կործանեցաւ. և ա̅ծ կըր
կին ուրախութ̅ի̅ էլից զարարածս
իջմամբ հոգւոյն սրբոյ։ վասն որոյ կո
չեցաւ բլուրն այն աւետեաց բլուր։
Եւ առաքեաց աղբիանոս զերկուս
սարկաւագունսն աւետաւորս. զոր
լըւեալ ուրախ եղաք յոյժ. և առաքե
ցաք զնոյն սարկաւագունսն աւետա
ւորս առ տրդատ 'ի ստորոտ արձա
նին. որ լըւեալ լըցաւ խնդութ̅ի̅, և
եկն 'ի վանսն հանդերձ գլխաւոր իշխա
նօքն։ և 'ի տեղին ուր զաւետիսն ե
տուն՝ հրամայեաց վ̅ի̅մս ժողովել. զոր
կոչեմք աւետ̅ե̅ց խաղ։ Եւ առաքել
սրբոյն գրիգորի զդասս պաշտօնէիցն
և զնշան սուրբ խաչին՝ հանդերձ քա
հանայիւք և անուշ խնկօք. որև ձայն
պաշտօնէիցն հնչեցուցանէր զանտառն։
Իբրև մերձեցաք 'ի բլուրն՝ նոքա ընդ
առաջ եղեն մեզ. և միաբան ելաք 'ի
բլուրն և աղօթեցաք։ Եւ յետ ողջու
նին

նին, ասէ սուրբն գրիգոր, բարձոք գը
տաք զձեզ առաձօտք խաղաղութեան.
Լենոքա ասեն, քարի՛ եկիր ա՛րուսեկդ
արդարութեան, որ զտիեզերս լուսաձո
րես. մշակ առանց ամօթոյ և աշտա
րակ բարձրագոյն քան զերկինս։
Եւ համբուրեալ զնոսա յերկար, ա-
պա՛ ելաք յեկեղեցին. քանզի չէր բը
լուրն հեռի՛ ի տեղւոյն. այլ սակաւ մի
բացեայ ընդ հիւսիսոյ կողմանէ որ
հայի ընդ արևելս՝ բարեհամ իսկ և
դիտանոց։ Եւ իբրև ածաք զնոսա
առ թագաւորն, յարուցեալ համբու
րեաց զնոսա Լենստաւ առաջի վկայա
րանին, և հայցէր օրհնիլ՛ ինոցանէ։ Լե
նոքա բազում վարդապետութ՞ խօ
սէին ընդ նոսա, և ուսուցանէին զսրբ
ութեան կրօնսն։ Եւ եկաց թագա
ւորն՛ ինոյն տեղւոջն աւուրս հնգե
տասան. և կանգնեցին զնշան տէրունա
կան խաչին մեծ անդամ քարակոփի՛ ի
տեղի տաճարին, ուր գիսանէսն էր. ա-
ռաջի աղբերն ուր զբժշկութ՞ն առնէր

հիւանդաց ։ և տօն ցնծութեան կատա
րէին բազմամբոխ ժողովրդեամբ ։
Զի կուտեցան 'ի տեղեաց տեղեաց ։
և եղեն թըւով իբրև հարիւր ո̅ ,
չորս հարիւր յիսուն ։ թող զզօրս թա
գաւորին և զպաշտօնեայս սրբոյն գը
րիգորի՝ զորս թագ̅ւ̅որն հրամայեաց
թըւել և գրել 'ի բուն խաչին ։ զի լիցի
յիշատակ ազգաց անցելոց ։
Եւ իբրև կատարեցին զա̅մ պաշտա
մունսն՝ եկեալ հասին զօրքն որք 'ի
վիրսն էին՝ առ թագաւորն , և ածին
ընդ ինքեանս երեք իշխանս և չորս
հարիւր արս ընտիրս ։ և տեսեալ թա
գաւորն ուրախ եղև յոյժ և գոհա
ցաւ զա̅յ ։ որ ետ 'ի ձեռս իւր զթըշ
նամիս իւր ։ և առեալ զնս̅ առաքեաց
յամուրն ուղկան ։ Եւ ինքեանք յա
ռաջ ելեալ խաղային 'ի բզ̅ւ̅մ աւուրս ։
և դարձեալ մեծաշուք պատւով և
բազում ուրախութ̅ գային հասա
նէին յեկեղեաց գաւառն ։ Եւ յետ
երից աւուրց ելեալ անտի գային և

հասանէին 'ի գաւառն պալունեաց ։
և եկեալ 'ի գեօղն կոճառս՝ քան զի
աշխատեալքէին՝ օր մի հանգիստ
ետուն իւրեանց ։
Բ՛րդ՝ յորժամ գնացին իշխանքն 'ի
վիրսն և դարձուցին զգերիսն՝ կողմ
նապա՛հ Թողին անդ զիշխանն աղձը
նեաց՝ դռո՛վ անուն նորա ։ և նորա
կաշա՛ռս առեալ 'ի Թագաւորէն հիւ
սիսոյ վացսուն հազար դահեկանս՝
գնաց յաշխարհն իւր ։ և այս ա՜մ ջան
նենգութե՜՝ վասն Թագաւորինէր ։
Եւ այնպ՜ս հմտութբ՜ եկն և դիտով,
մինչ զի զԹագաւորն 'ի նեղ տեղին
Թակարդեաց ։ բայց առ Թագաւորն
տրդատ երեսուն ո՜ այր միա՛յն էր մը
նացե՜լ ։ և այլն ամենայն գնացեալէին
'ի մուշնաւան ։ Բ՛րդ 'ի հասարակիլ գի
շերոյն մինչ մեք զպաշտօն մատուցա
նէաք առաջի սրբոյ խաչին զոր կանգ
նեաց իշխանն սիւնեաց հրամանաւ
սրբոյն գրիգորի ։ զի մինչ տրդատ
զիննակնեանն կատարեաց՝ իշխանն ան

գեղտան զխոռենից կանգնեաց, և սիւ
նեացն զկոճառացն կանգնեաց և ո̅բն
գրիգոր երթեալ օրհնէր զխաչսն և
յերկոսեանն հիմն եկեղեցւոյ արկա
նէր։ Ա՛ղդ՝ ի նոյն աճուրսն ի պաշտա
ման գիշերոյն մինչ դեռ զօրհնութիւ
երից մանկանցն ասէաք, և թագաւորն
եկեալ առ մեզ աղօթէր իշխանօքն
հանդերձ, և չունէաք բնաւ յիրաց
կասկած. յանկարծակի ձայն ահեղ
իբրև ամպոյ որ յոյժ դղրդէ, եկն
էհաս՝ի վերայ մեր. և զառաջին կողմն
գեղջն պատեալէին հետևակքն, և
զներքինն հեծեալքն. և սկսան հնչե
ցուցանել զփողս պատերազմացն։ և
Ժնդիւն սաստիկ լինէր շուրջանակի.
և անդ էր տեսանել զձիոցն վրնջիւն։
Յայնժամ սկսան և իշխանքն մեր ը̅
առաջ ելանել նոցա՝ի պատերազմ.
զի լուսինն միջօրեայէր. բայց՝ի պա
տերազմէն արգել զն̅ թագաւորն,
ասելով գիշերէ այժմ. և մեք ոչ գի
տեմք զչափ թշնամեացն։ այլ թէ ի

ձ̅բ̅ մաս

մաստութ՟ կամիք առնել զգործն,
ելէք վեց հազար ընդ մէջ այգեստա
նեացդ և թաքերուք 'ի գլուխ արձա
նին մինչև ցառաւօտն. և չորս ո՟
ընդ հաշտենից կողմն և չորս հազար
ընդ մէջ նոցա գնասցեն առ այգես
տանեօքն ընդ վերին գահսն, և մեզ
ուշ կալցեն. բայց զձեզ մի՛ իմասցին
և դարձեալ փախիցեն նենգութ՟. և
'ի մէջ առեալ վտանգեսջիք զնոսա. և
բաժանեալ զզօրսն յարձակեաց ո՟պ
խորհեցաւ։ Բայց թագաւորն և ս՟բն
գրիգոր 'ի փոքր ամրոց անդ մտեալ
մեօք հանդերձ աղօթէին։ Իւ միոմն
'ի սիւնեաց զօրացն ըմբռնեալ պա
տանի մի 'ի հիւսիսական զօրացն՝ էած
առ թագաւորն. և իբրև տեղեկացաւ
'ի նմանէ իրացն թէ 'ի քոյ զօրացդ և
իշխանացդ են իրքն, և թագաւորն է
գեղռէհօն, և վասն ունելոյ զքեզէ
եկեալ յիսուն և ութ հազարաւ, հրա
մայեաց յայնժամ զօրացն պատրաս
տել զինքեանս յետին աւուրն և մա

ձգ հու։

հու։ Եւ իբրև առաւօտ եղև՝ սկը
սաւ զօրս կազմել յամրոցս Թագաւո
րին 'ի վերայ արձանին։ Եւ Թագա
ւորն հիւսիսոյ հրամայեաց զօրաց
իւրոց՝ ունել զառաջսն վեց հազար
սպառազինօք. զի կամէր արգելուլ
զԹագաւորն. զոր յառաջ եկեալ ար
գելուին 'ի գլուխ արձանին. որ զբա
զում ժամս ոչ կարաց ելանել 'ի վեր։
Զոր տեսեալ սրբոյն գրիգորի և յար
տասուս հարեալ ձայն էբարձ և ասէ,
մկրտիչ յօհաննէս կարապետ ք̅ի՝ չը
տեսանե՞ս զինչ գործեն. ա՛րդ՝ հա՛ս
յօգնութի՞, և ա՛րա՛ զզօրս զայս նշա
նաւորս յազգս։ և առեալ զնշխարս
առաքելոցն տ̅նագրէր 'ի վերայ նոցա։
Յայն ժամ ո՛ւժ առեալ տրդատայ
քաջառնաբար ձայն տըւեալ յօգնու
թի՞ կոչէր զս̅բ կարապետն. և կըտ
րեալ զռազմ առաջապահիցն էանց 'ի
գլուխ բլրին. և որք 'ի գիշերին Թա
գուցեալ էին զօրքն յարուցեալ 'ի մէջ
առին զայն զօրսն. և կոտորեալ փա

 խըս

խոստական արարին զնոսա. և զորս
փախուցին՝ իջուցեալ 'ի հարաւոյ
կողմն անտառին ոպ 'ի Թակա՛րդ ար
գելլով կոտորեցին զնոսա անխնայ.
և անմանեցաւ տեղին՝ Թակա՛րդ ։
Իսկ զօրքն հիւսիսոյ որպէս դիպօղ
ժամանակ գտեալ՝ յարձակեցան 'ի
վերայ գեղջն. և դեռ հանէին զմեզ
յամրոցն. զոր տեսեալ չորս հազա
րացն որ 'ի վր գեղջնէին, յարուցեալ
փախստական արարին զնս 'ի ներքոյ
գեղջն՝ զոր ոմանք յագորդացն գլա
ջարդս արարին զճահատս երիվա
րացն. և բազումք 'ի հեծելոցն մե
ռան 'ի վիմացն ։ Իսկ զօրքն մեր ցրմել
զնոսա ընդ այգեմէջսն, սակաւք պրր
ծեցան 'ի նոցանէ. և անկան 'ի տեղւոջն
վեց հարիւր այր ։ Իսկ 'ի Թակարդսն
հազար էճ այր. և զոր պարսաւորքն
կոտորեցին, ը հարիւր վեց ։ և ընդ
ամենայն, երեք հազար հարիւր վեց
այր ։ Եւ ապա՛ դարձեալ Թագաւորն
'ի փոքր կոտորածէն՝ ել 'ի գլուխ ար

ձանին. և հարեալ զազդարար փողսն
մնաց անդ մինչև ամ զօրքն'ի մի վայր
ժողովեցան։ Եւ իբրև եկին հասին
'ի տեղին, զսբն գրիգոր իջուցին յան
տառէն և պահեցին զնա արք ՃՌ։
Իսկ Թագաւորն հիւսիսոյ առեալ
զզօրս իւր՝ գնաց'ի հաշտենից տափն,
և առաքեաց թուղթս առ տրդատ,
եթէ 'ի վաղիւն եկ և տացուք պատե
րազմ. և եղիցի օր յաւիտենական'ի
միջի մերում։ զի կամ տացես զիշ
խանս իմ յիս, և զհարկսն հընգետա
սան տարւոյ. ապա թէ ոչ՝ քանդեմ
զերկիրդ քո սրով և գերութիւն. ոչ
զի ծանիցես զխոզութիւն քո զոր արա
րեր առաջի զօրաց քոց։ ա՛ր դ արա
այդմ պատասխանի։ Եւ ընթերցեալ
զթուղթն՝ ոչ արար նմա պատասխանի.
այլ յարուցեալ գնաց երեսուն հազար
արամբք 'ի պատերազմ։ և երթեալ
յանդիման նոցա իջանէր 'ի մուշեղայ
գեօղն հաշտենից։ Եւ'ի վաղիւն ըսկը
սան ռազմ կազմել և հնչեցուցանել

զփող պտ̄րազմին. և դռնապահս տե
ղեացն զբագրատունեաց իշխանն կա
ցուցանէր։ | ակ զաջ զօրուն թևն տայր
'ի ձեռն իշխանին սիւնեաց. և զահ̄եկն
'ի ձեռն իշխանին անգեղտան։ | ակ ըզ
գահերէց իշխանն կացուցանէր թիկ
նապահ իւր՝ և այնպ̄ յօրինեցան 'ի պա
տերազմ Եւ իբրև ա̄մ զօրքն սկսան
ընդդէմ իրերաց անցանել՝ ձայն բար
ձեալ արքայն հիւսիսոյ ասէր, արքայ
հայոց յառաջ մատիր։ և իբրև եկին
ընդդէմ իրերաց՝ սկսան իբրև զմրր
ճաւորս քարահատաց՝ կամ իբրև
զուռնաւորս՝ մինն առնոյր և միւսն
իջուցանէր։ քանզի և արքայն հիւսի
սոյ զօրաւ՛որ էր իբրև զտրդատ և ա
հաւոր։ Բայց 'ի բազում կոփելն մի
մեանց։ արքայն հիւսիսոյ սկսաւ պա
կասիլ. և գիտացեալ եթէ վնասիլ՛ոց է
քանզի ճոպանաւ՛որ էր, աճապարեալ
ձգեաց զճոպանն և էարկ ընդ աջ
թիկն և պարանոցն տրդատայ. և այն
չափ փութանակի դարձաւ 'ի կըր

թել զճոպանն, մինչ զի ոչ կարաց
տրդատ շարժել զձեռն իւր ։
Յայնժամ ուժ առեալ տրդատայ՝
մտրակեաց զերիվարն իւր ըզկնի
գեթռեհոնի այնչափ փութապէս,
մինչ ոչ տալ քայլս տասն ոտից նր.
և իբրև էհաս նմա, ասէ՝ կատաղի
շուն՝ խառնեցեր զկնի քոյ ջլացդ. և
անդէն բարձեալ զաջ ձեռն իվեր՝ ի
ջուցանէր զսուրն՝ ի վերայ ձախոյ թի
կան նր և անցուցանէր ընդ գօտին.
և զողն երիվարին հանդերձ գլխովն
երկուս կտրեալ յերկիր ընկէց ։
Եւ այնէր զարմանալի, որ գլուխն
և աջ ձեռն և աջ ոտն գեթռեհոնի,
և երիվարին ողն ընդ մէջ հերձեալ
ը միմեանս թաւալէին ։ Զոր իբրև
ետես իշխանն անգեղտան իվեր ա
ծեալ զահեակ թևն՝ ձայն էբարձ
առ իշխանն սիւնեաց՝ ի մէջ ածել ըզ
գունդն այծուց. զի անկաւ քօշն ։
Եւ նա՝ ի մէջ ածեալ էհատ զզօրսն.
և անցեալ յաջ թևապետն հիւսիսոյ՝
ասէ, աստեղահաչ՝ յառաջ մատիր և

մարտիցուք ։ յայնժամ աճապարեալ
հիւսիսայինն կտրեաց զգլուխ երի
վարին սիւնեաց իշխանին ։ Իսկ նա
վտանգեալ էած զսուրն փութպս և
կտրեաց զոտս երիվարին հիւսիսոյ
իշխանին ։ և երկոքեանն յերկիր ան
կեալ բուռն զմիմեանց հարին ։
Յայնժամ ոմն 'ի ծառայից սիւնեաց
իշխանին մղեաց զոմն և ընկէց յերի
վարէն իւրմէ ։ և ածեալ զերիվարն
սիւնեաց իշխանին ասէ՝ հեծիր տր ։
և նա՛ աճապարեալ երիվարաւն կոտ
րեաց զգլուխ հիւսիսոյ իշխանին և
ընկէց 'ի մախաղ իւր ։ Եւ իբրև ե
տես իշխանն անգեղտան զիրսն՝ և ըզ
զօրսն թէ 'ի փախուստ դարձան, ապա՛
զձեռն 'ի գործ արկեալ բախեցին ըզ
պատերազմն առ իրեարս ։ որև թա
գաւորն զհետ մտեալ մինչև 'ի մուտս
արեգական՝ կոտորեցին զնոսա անխը
նայ ։ և ոչ ոք դիմադարձ գտաւ նց ։
և 'ի նուրբ տեղիս դիմէ՚ օթևանս առ
նէին առ եզեր գետոյն, որ անցանէր

ձթ ը

ընդ մէջ գաւառին հաշտենից. և բա
նակեցան անդ յայնմ կողմանն
'ի նոյն գիշերին։

Եւ իբրև առաւօտ եղև՝ պատրաս
տեցան մնացեալ զօրքն հիւսիսակա
նաց, և յարձակեցան 'ի վերայ զօրացն
հայոց. և սկսան կոտորել զնոսա։ և
այնչափ յանդգնեալ՝ մինչ զիշխանն
ծոփաց 'ի մէջ առեալ պատեցին բա
զումք. որ աղաղակեց ասելով, ո՛ւր ես
իշխանդ սիւնեաց. հաս ինձ յօգնութի։
Եւ նորա հասեալ իբրև զսրաթռիչ
արծիւ՝ հալածեաց զզօրսն 'ի նմանէ։
և տեսին զի խոցեալ էին չարաչար ԸԼ
երեսօք նորա՝ առեալ տարան 'ի բա
նակն և անդ մեռաւ։ Իսկ ընդդէմ
դարձեալ տրդատայ՝ սպարապետն
գեդռեհոնի բազում մէքենայիւք իւ
րովք, և կարէվէր խոցեաց զահեակ
թևն նորա։ և նորա բարկացեալ և
մռմռեալ իբրև զառիւծ՝ յարձակե
ցաւ 'ի վերայ ՆՐ, և հարեալ 'ի վերայ
գագաթանն ճեղքեաց ընդ երկուս.

և անկեալ զկնի զօրացն փախստական
արար զնոսա մինչև 'ի հարք. և այլք
ոմանք հետամուտ եղեն նոցա մինչ
'ի կարնոյ քաղաքն։ Լ՝Ը իբրև դար
ձաւ Թագաւորն և իշխանն յարձանն՝
և ի՞ջին առ ս՞բն գրիգոր 'ի տեղին ուր
ս՞բ կարապետն էր, մեծ գոհութի՞ մա
տուցին ա՞յ. և առնէին պատարագս
ողջակիզաց սպիտակ զըճարակաց և
նոխազաց, և բազում գառանց։ և
տային ողորմութի՞ս աղքատաց բազ
մաց։ Լ՝Ը իբրև եկեալ ժողովեցան
զօրքն ամենայն՝ համար արարեալ՝
գտաւ սպանեալ 'ի մերոց զօրացս հա
զար և ութսուն. իսկ 'ի նոցանէ,
տասնև հինգ հազար ինն հարիւր քա
ռասուն երկու՝ Լոցա փախստական
եղեալ մինչև 'ի հարք. և իշխանն հար
քայ անկեալ 'ի վերայ 'ի վեց տեղիս կո
տորեաց ութ հարիւր յիսուն և վեց
այր. և ի վիրս մտեալ 'ի բազում տեղիս
կոտորեցին զնոսա. և որք գնացին 'ի
գաւառն իւրեանց՝ էին վեց հազար.

ղա իսկ

իսկ մինչ 'ի տարօն մտին՝ էին-յիսուն
և ըստ։ * Այս ամ գործեցաւ 'ի գալն
նոցա 'ի Հռովմայ. բայց եղև 'ի ձեռն
նենգաւոր իշխանացն աղձնեաց։
Որք երբև կացին տաւուրս երիս 'ի
տեղիս իննակնեան, ապա խաղացին
միաբան և գնացին 'ի գաւառն ապա
հունեաց, տանելով ընդ ինքեանս զնշ
խանն որ 'ի բերդին ուղկան. և չորս
հարիւր այր 'ի դիւան արքունի տայր
արկանել։ Եւ երբև հասաք զօրացն
որ յառաջէին ուղարկեալ՝ հրամայեց
նոցա ունել զնշխանն աղձնեաց և
ծայրաքաղ առնել. զոր արգել նոքն
գրիգոր 'ի պատուհասէն. բայց 'ի
պատճոյն հերքեալ մերժեաց և վա
րեաց 'ի գաւառէն հայոց։ Եւ զկնի
այսորիկ եթէ լմանալ ոք կամիցի՝
զայլ պատմագիրս հարցցէ։ Զի՝ այ
սոքիկ 'ի մէնջ պատասխանի և ձեզ
բաւական լիցի։ Բայց եթէ դուք
գալ կամիք՝ երկիրս բարի, վայրքս և
օդս անուշ. և չուր բաղում։

Երկիր դաշտ և շուրջանակի լերամբք
պարսպեալ և բազում ամրոցօք · եր
կիր խոտաբուղխ և մեղրաբուղխ։ և
ո՞պ մանանայն որ յերկնից իջանէր ,
նոյնպ՞ և աստ իջանէ՛ իվ՞ր անտառացն,
զոր գազպին կոչեմք · * Եւ զի ձեր
երկիրդ խորշակահա՛ր է և հացապա
կաս ։ * Իսկ մերս ամենայն բարու
թեամբ լցեալ · իշխանքնս կրօնաւո
րասէրք աղքատասէրք, որբոց խնա
մածուք և սուրբք 'ի չարեաց ։
Արդ՝ աղօթիւք ձերովք պահեսցէ
տ՞ր զհօտս մեր և զձերդ 'ի
խաղաղութի՞ · շնորհիւ
տ՞ն ողջ լերուք 'ի
տ՞ր · ամէն ։

Պասն թէ ոյք էին որք յաջորդեցին
զառաջնորդութիւն սրբոյ կարապե
տին, որ կոչի գլակայ վանք։ 14

✠

Զենոբ եկաց հայր վանա՛ցն գլա
կայ ամս Ի։ Յետ նորա աշա
կերտն անտօնի ամս Չ։ 'ի սորա
տասն ամին եկն ա՞ն գրիգոր 'ի վանս
գլակայ, և եկաց յաւետեաց բլուրն
առ անտօն և կրօնիդէս ՟ամիս։
և գնացեալ անտի 'ի մանեա՛յ այրն՝ և
կացեալ անդ ամս Է՝ վախճանի 'ի կե
նաց 'ի փառս ա՞յ։ Ստեփաննոս աշա
կերտ նորա ամս ԺԵ։ սա՛ շինեաց ե
կեղեցի յայնկոյս կոհառայ առ յոր
դաբուղխ ազբերն, յորում սուրբն
գրիգոր զնշխարսն պահեաց։ և կացոյց
անդ կրօնաւորս վացսուն։ Եփրեմ
ամս Իը։ Յօհաննէս ամս Ժ։ Ա՝արկոս
ամս Ժը։ Կիւրեղ ամս քսան երկու։
Գրիգոր ամս վեց։ Ա՝նդրէաս ամս
Ժա՞։ Ն՝երսէս ամս Է։ Յօհաննէս
ամս

ամս գ̅ ։ Սահակ ամս ե̅ ։ Բարդողի
մէոս ամս գ̅ ։ Բ̣թանաս ամս ժ̅ ։
սա՛էր ՚ի ժամանակս մովսէսի հայոց
կաթողիկոսի, յորում թվականն ե
դաւ ։ սա՛էր տեղեակ տումարի ամե
նայն ազգաց ։ Կոմիտաս ամս ութն ։
Ստեփաննոս ամս վեց ։ Բարդողիմէոս
ամս ութն ։ Ա̣աթէոս ամս երեսուն ։
սա՛ ստացաւ զառաքինութի̅ ։ և եղև
սիրելի մուշեղայ իշխանին մամկոնէից
վասն սրբութե̅ իւրոյ ։ սա՛ բազում
կրօնաւորս կարգեաց՚ի վանս գլակայ ։
և եղեն առ սովաւ արք երեք հարիւր
ութսուն և ութն ։ Ի սորա ժամա
նակս եկին չորս մարդ՚ի յունաց ս̅բք
և ճգնաւորք, և բնակեցան յանապ̅տի
անդ ամս քսան ։ Եկին և այլ սուրբք,
և բնակեցան ոմանք՚ի նոցանէ յիննակ
նեան վանսն ։ և այլքն՚ի քար այրն որ
՚ի հարաւոյ կողմնէ, ՚ի թագուցած
խաչին կողմանն ։
Բ̣րդ՝ ՚ի ժամանակս իշխանութեանն
մուշեղայ մամկոնէից տանն, և՚ի հայ
ղե
րա

րապետութեանն Թոթկայ՝ հրաշալի
իմն գործ գործեցաւ՝ի վանս գլակայ
՝ի դուռն սրբոյ կարապետին ։
Իշխանն արծրունեաց որում կոչեն
վարդպատրիկ՝ շինեաց բազում եկե
ղեցիս և վանորայս ։ և ունէր կին մի
բարեպաշտօն մարիամ անուն ։ եղև
նմա գնալ՝ի կեսարիա, էառ զկին իւր
և էած առ հայր նորա, և ինքն գնաց։
Եւ կինն քանզի յոյժ փափագէր տե
սութեան սրբոցն որքէին՝ի վանս սրբոյ
կարապետին, առեալ յաւուր միում
զմանուկն փոքրիկ ՝ի ստեան՝ որ էր
անդրանիկ իւր՝ բազում յօժարութեամբ
գայր ՝ի դուռն սբ կարապետին ։ և ա
ղաչէր յոյժ զկրօնաւորսն մտանել
յեկեղեցին ։ իսկ սպասաւորքն արգե
լուին զնա յայնմ խորհրդոյն ։ բայց
զմանուկն առեալ՝ի գրկաց տիկնոջն՝
տարան յեկեղեցին առաջի սրբոյ սե
ղանոյն, երկրպագեցուցին առաջի տն
և բերեալ ետուն ցնա ։ Իսկ նորա ա
ռեալ զմանուկն սկսաւ արտասւել

լալ և ասել՝ վայ ինձ մեզաւորիս որ
զրկեալ եմ 'ի բարեաց. ողբացէք զիս
ամենայն կանայք. տեղի տուք ամ
արտասւաց իմոց ամենայն ձայնար
կուք։ ծածկեսցեն զիս լերինք և ո
ղորմեսցին ինձ բլուրք։ գազանք եղ
կեսցեն զիս, և թռչունք խիթասցեն ը
մեզ. հրեշտակք ապաշաւեն զանձնիմ
և դևք յարձակեցան 'ի վերայ իմ։
Ողորմեցարուք ինձ սպասաւորք ա
կարապետիդ և տուք տանել զիս 'ի
տաճար անդր։ Եւ ցմանուկն ասէր,
որդեակ՝ ընդէր բաժանեցար 'ի գըր
կաց իմոց՝ զիարդ ոչ ողորմեցար մօր
քոյ. ոչ ես ծնայ և սնուցի զքեզ. և
զիս միայն թողեր։ Եւ զայս ասա
ցեալ կնոջն՝ հանեալ բազում անու
շահոտ խունկս տայր սպասաւորացն
և ասէր, առէք զայս և տուք տանել
զիս իներքս։ Եւ պատգամ ուղարկէր
ցաբն թոթիկ զի առցէ զիրսն և թող
ցէ զնա իներքս. և նա ասէր՝ ոչ ա
ռեալեմ զայդ հրաման յառաջնոցն,

և ո՛չ մեք իշխեմք առնել։ ա՛րդ՝ եթէ
վասն հաւատոյ ես՝ ընդունելի՞է այդ
չափ աշխատութի՞դ. և մի՛ վասն պա
տասխանւոյս ձանձրանար՛ի մէնջ. այլ
ե՛րթ խաղաղութբ. Եւ նա՛ ասէ, ո՛չ
այդպէս. այլ եթէ վասն իշխանութե՞
ես չերկնչիմ՛ի ձէնջ. իսկ թէ վասն
թշնամութե՞ քոյ կարապետինէ ընդ
մեզ, ո՞չ ապաքէն և նա՛ի կնոջէ՛ է ծնել։
Եւ դարձուցեալ զբան իւր՝ ասէ,
արդ՝ ես մտանեմ ո՛վ տ՞ր, և զքո մայրդ
ինձ բարեխօս ունիմ. մի՛ առներ յիս
զցասումն բարկութեան քոյ. և մի՛
եղէց նշաւ՛ակ երկրի։ զի թէ և դու
զկնոջ կաթն արբեր, գո՛նեայ և զիս
տաճարիս արժանացո՛. և զայս ասա
ցեալ եմուտ՛ի ներքս՝ համբուրելով
զորմս տաճարին։ Եւ գնացեալ ա
ռաջի սրբոյ սեղանոյն ծո՛ւնր կրրկ
նեաց և ասէ, տես տ՞ր զբեկեա՛լս սրբ
տիւ՛, և ողորմութի՞ արա ինձ վիրաւո
րելոյս. զի դու ողորմա՛ծ ես ո՛չ յիշես
զբարկութի՞ քո. արդ՝ օրհնեա՛լ լիցի
ղը անուն

անուն քո յաւիտեան։ Եւ իբրև ել
արտաքս՝ խստացան, ոխացան և
տրտմեցան ըն իրսն սպասաւորք եկե
ղեցւոյն. և ոչ պատրաստեցին կնոջն
կերակուր։ Իսկ նա՛ հրամայեաց իւ
րոց սպասաւորացն պատրաստել
ճաշ կրօնաւորացն. որք եկին 'ի սե
ղան տիկնոջն. և էին արք երեք հա
րիւր իննսուն։ Եւ յորժամ ճաշեցին՝
ասէ տիկինն, ով սրբասէրք և փոյթք
յա՜ծային պատւիրանսն, ուրախ լե
րուք ընդիս այսօր 'ի տ՜ր. զի ներեա՛ց
ինձ և կատարեաց զփափագումն սըր
տի իմոյ։ ա՛րդ՝ օրհնեցէք զիս և ար
ձակեցէք։ Իսկ եկեղեցապանն և մի
ոմն 'ի կրօնաւորացն յարուցեալ 'ի
դուռն եկեղեցւոյն գնացին 'ի սուրբ
կարապետն՝ և ծունր կրկնեալ անդ
ասեն, ով տ՜ր դու ներե՛ս կնոջն որ
զայն գործեաց, և ա՛յլ կանանցն հա
մարձակեալ մոյծ. ա՛րդ՝ արա՛ զնշան
զօրութե՜ քոյ 'ի նա. զի վկա՛յ լիցի ազ
գաց և օրէն բազմաց։ Եւ իբրև ու

ղթ ղար

ղարկեցին զկինն և ինքեանք դարձան,
և մերձեցաւ կինն ելանել զառիվեր
լերինն որ 'ի գլուխ սադակայ է և 'ի
փոքր ամրոցն Հայի. ետես կինն 'ի
հիւսիսական կողմանէ տեսութիւն
զարմանալի. ընկէց զմանուկն 'ի դայ
եակն և ասէ, տեսանեմ այր մի գիսա
ւոր ընդ ամպս որոտացեալ և ելեալ
յեկեղեցւոյն գայ առիս. տեսանեմ
առ նա սուր սրեալ և թաքուցեալ և
յարեան ներկեալ: Եւ ընդ բանսն
էհար զնա, և սատակեցաւ անդէն.
զոր տեսին սպասաւորք եկեղեցւոյն:
Իսկ հայրն ելեալ յոյժ բարկացաւ
եկեղեցպանին, և տրտմեալ արտաս
ւեաց բազում ժամանակս:
Եւ ապա առեալ զնա սպասաւորացն
պատրաստեցին նմա գերեզման և ե
դին 'ի նոյն տեղւոջն. և կանգնեալ 'ի
տեղւոջն խաչ քարեղէն գրեցին 'ի նմա
այսպէս. որ յանդգնիցի մարտնչիլ ընդ
եկեղեցի այ՝ այս սուր եղիցի 'ի վր
նորա. և հաստատեալ կայ այս գրով

 'ի նոյն

'ի նոյն տեղւոջն։

Իսկ զմանուկն առեալ ետ 'ի դայ
եակսն մինչև յարբունս էհաս. և ա
պա ուսուցեալ արար զնա հայր վա
նացն յառաջ քան զմահ իւր։
Իսկ հայր նորա իշխանն արծրունեց
եկեալ 'ի կեսարիա լըճաճ զմահ տիկ
նոջն և ստրջացաճ։ Իսկ հայրն մխի
թարեաց զնա։ Եւ խորհեցաճ շինել
եկեղեցիս՝ բայց գնաց 'ի մանրավանսն
վ՛ն զնիւթ գտանելոյ. և շինեաց անդ
վայելուչ եկեղեցի և կոչեաց զանունն
ա՛ծածին, վ՛ն կնոջ իւրոյ. և զարդա
րեաց զնա հրաշալի սպասիւք։ նոյնպ՛
և զ՛նբ կարապետն զգլակայ վանսն
զարդարեաց։

Սա՛ դարձոյց 'ի ս՛բ կարապետ զկը
ճառս և զպարեխ. քանզի իշխան
ոմն անօրէն կտրեաց զերկոսեանն և
ետ գուսանի՛ միոյ. և կիւրեղ հայր
վանացն անէծ զնա. և յետ սակաճուց
յորս ելեալ իշխանն անկաճ յերիվա
րէն և էհան զոգին։ բայց որդին թէ

ճա պէտ

պէտ և դարձոյց զաւանսն՝ այլ նոքա
ոչ առին մինչև ցիշխանս այս ։
Որդ այս իշխան կշռեաց Ի՞ր հազար
դահեկան. և տըւեալ տարօնոյ իշխա
նին գնեց՛ի նմանէ զերկոսին աւանսն.
և ետ վանից սրբոյ կարապետին վըճ
ռով ։ Սա՛ ետ և երկու աւանս յիւր
իշխանութենէն սրբոյ կարապետին,
զարտամետ և զգոմս ։
Ընդ նոյն ժամանակս սպանին զոր
միգդ զպարսից արքայն. և ջամբ խոս
րով որդի նորա եկն փախստական
՛ի հռօմ առ մօրիկ արքայն. և կնքեալ
քաղդէական հաւատով՝ դարձաւ
զօրօք ՛ի պարսից գործաւորսն, և
առնու զերկիրն ։
Որ՛դ՝ մինչ՛ի յունաց գայր խոսրով՝
առեալ զմուշեղ զտ՞րն մշու, և զխու
թա՛ զտարօնու իշխանն և զսասնոյ,
տարաւ ՛ի դվին և հայոց մարզպան
հաստատեաց. և տըւեալ ՛ի ձեռս նոյ
զզօրս հայոց ՚Ի հազար, ինքն առեալ
զզօրսն յունաց Ի՞ր՝ գնաց՛ի բալխաս

տան. և ընդ հայոց հպարտացան բնա
կիլ. այլ գնացին անցին յաւուր միոյ
ճանապարհ 'ի դաստակերտն
և անդ իջին։

Իսկ նիհորճէն նորմիզդ գումարել
զզօրս պարսից ութսուն հազար՝ եկն
'ի վերայ մուշեղայ. և նորա քաջալե
րեալ զզօրս հայոց՝ հազիւ հաւանե
ցոյց մտանել 'ի պատերազմ։
Եւ բանս 'ի բերան զօրացն կոչել
յօգնութիւն զնբ կարապետն. և միա
բան զայս բան ասացեալ յարձակե
ցան 'ի վր զօրացն պարսից. և ետ տր
զթշնամիս 'ի ձեռս նց։ Եւ գիտացել
մուշեղայ թէ թագաւորն է՝ մատեաւ
նմա. և սկսան բախել իրերաց. յոր
յոյժ վաստակեցաւ մուշեղ. և 'ի վեր
կալեալ զմուրճն իջուցանէր 'ի վերայ
գագաթան նր. որոյ ցնդեալ ուղեղն
իջանէր ընդ քիթն. և կտրեալ զգը
լուխ նորա եդ 'ի մախաղ իւր։
Եւ յորդորեալ զզօրսն 'ի պատերազմ.
զօրացեալ եդ զնոսա 'ի փախուստ.

և կալան քառասուն և ութ իշխանս
կենդանի. և համար կոտորածոյն ոչ
երևեցաւ վասն բազմութեանն. և
ըմբռնեալ յիշխանացն ո՞ արս՝ դար
ձան՝ ի կոտորածէն մեծաւ յաղթութ՞ւ:
Եւ իբրև ա՛զդ եղև առ խոսրով թա
գաւորն պարսից՝ խնդաց յոյժ. իսկ
զօրքն յունաց տրտմեցան սաստիկ յա
մօթով:

Բ՛րդ՝ իբրև կոչեաց թագւրն զմու
շեղ և պատրաստեաց պարգևս տալ
ամենայն զօրացն, յղեաց առ խոսրով
մօրիկ արքայն յունաց, (քանզի թա
գաւորին փոխան կարգեալէր զնա.)
եթէ՝ գիտես գու զայդ, որ արքայիդ
սպանման սպառնայ մուշեղ: Եւ նա՛
խորհեցաւ գործել նմա դարան մա
հու. և առաքեալ կոչեաց զմուշեղ
առինքն. և իմացեալ քոյրն խոսրովու՝
ա՛զդ առնէր նմա զնենգութի՞ եղբօրն
իւրոյ: Եւ մուշեղ առեալ ընդ իւր
քառասուն այր միայն առանց ու
րուք, և կազմեաց զնոսա զօրէն պա

տերազմի. և սուսեր ընդ մէջ ածեալ
այնպէս եկին առ թագաւորն երիվա
րօք մինչ 'ի դուռն խորանին. և ամ
խստութեամբ տրեալ պատասխանի, և
'ի լոյս ածեալ զգարանն մահու՝ թքա
կոծեաց զանմաութիւն նորա. և յարու
ցեալ մեծաւ բարկութեամբ ել 'ի թա
գաւորէն։ 'ի բրև լուաւ թագաւորն՝
երկեաւ 'ի նմանէ. զի մանեւ կէր։
Եւ իշխանն մուշեղ առաքեաց առ
յունաց զօրապետն և ասէ, կամեցայ ք
դուք նենգութեամբ սպանանել զիս.
արդ մի՛ զարթուցանէք զառիւծն 'ի
քնոյ, և մի՛ զգայլ՝ որ զբարս իւր մո
ռացեալէ։ ապա թէ ոչ՝ որ զութսուն
հազարն յաղթահարեաց, կարօղէ և
զեօթանասուն հազարսն յաղթահա
րել։ և ինքն թողեալ զզօրսն 'ի դվին՝
'ի բաց եկաց 'ի մարզպանուէն. և առ ել
զզօրս իւր որ 'ի մամիկոնեան տանէն՝
եկն 'ի գաւառ իւր։ Եւ յետ սակա
ւուց եսպան փօկաս զմօրիկ, և ինքն
նստաւ յաթոռ նորա. զոր լուեալ խոս

րովու՝ գնաց վրէժխնդիր լինիլ մօր
կայ. և եկեալ անցանէր ընդ կարնոյ
քաղաքն։ և առաքեաց առ մուշեղ իշ
խանն տարօնոյ թէ՝ արի ե՛կ ընդիս 'ի
դուռն թագաւորին յունաց. ապա
թէ ոչ՝ յորժամ դառնամ ապականե՛մ
զերկիրդ քո. և զքեզ և զընտանիս քո
տանիմ կապանօք 'ի դուռն արքունի։
իսկ նա ոչինչ տէեալ պատասխանի՝
սկսաւ զերկիրն ամրացուցանել։
Եւ իբրև գնաց խոսրով և էառ աւար
և գերութիւն յերկրէն յունաց՝ ան
ցեալ գնաց ընդ կողմանս բասենոյ։
Բայց յորժամ եկն խոսրով 'ի քղ̃քն
կարնոյ՝ զմիհրան ուղարկեաց զօրօք
'ի տարօն, զի կալցէ զտէր նորա և տար
ցէ 'ի բալխ. և զտեղիսն զորս նա՛ հաս
տատ ունէր՝ կործանել հրամայեաց,
և զկրօնաւորսն սպանանել
որք եկին և արարին
զիրսն։

✠

Գլուխ պարսից պատմութեան. և գալն
միհրանայ 'ի տարօն երեսուն հազա
րով, և կոտորել զնոսա գայլուն
վահանայ յօձ քաղաք։ 19

Յառաջին ամի թագաւորու
թեն փոկասու՝ մեռաւ մօ
րիկ դաւով 'ի ծառայէն իւր
մէ. որև նստաւ յաթոռ նր
յիշեաց խոսրով զուխտն իւր և եկն
էառ աւար և գերութիւն. և բրեաց
բազում աւանս և քաղաքս, և ելեալ
գնաց։ Իսկ զմիհրան քեռորդի իւր՝
առաքեաց 'ի տարօն ՚ի հազարաւ. և
իբրև եկն 'ի գաւառն հաշտենից՝ կա
լեալ զոմն իւրեանց առաջնորդ՝ ե
կին մինչև յարձանն։ Եւ իբրև ըն
թերցան զաւիր արձանին՝ խորտակե
ցին զարձանն քարեայ՝ և ինքեանք
ութ հազար այր գնացին 'ի մեղտի և
յաստեղօն ամրոցն. իսկ Ի՞ՔՌ դեռ
արձան անդր կային դիտելով զփա

Ճէ խու

խուցեալսն ։ Եւ իբրև գիտացին
եօթն արքն որքէին խոտաճարակք
'ի վանսն, զամենայն կրօնաւորսն փա
խուցին. յորոց ոմանք փախեան և ո
մանք մնացին ։ բայց պօղիկարպոս ու
ղարկեաց զամենեսեան յամուրն ող
կան. և 'ի տեղւոջն զհայրն թոթիկ
և զըսպասաւորն եկեղեցւոյն միայն
արգել. և հրամայեաց սպասաւորացն
պատրաստել զանձինսն տէրունական
մարմնոյն ։ Եւ իբրև մատուցին ըզ
պտ̄րագն եօթնեքին խոտաճարակքն
հրամայեցին նշանագրի միում որ ե
կեալէր 'ի յունաց՝ գրել զառ 'ի յին
քեանց ասացեալսն ։ և ինքեանք տա
րածեալ զձեռս իւրեանց առաջի
սրբոյ սեղանոյն սկսան
ասել այսպէս ։

ՏՐ ա̄ծ զօրութ̄եց և արարիչ ա̄մ
լինելութ̄եց, որ ստեղծեր ըզ
մարդն 'ի պատկեր քոյոյ բարերարու
թ̄եդ, և կացուցեր զնա իշխան 'ի վ̄ր
երկրի. և ետուր նմա զփառս և զպա

ճը տիւ

տիւ յաւիտենական անմահ. ուստի
նախանձու բանսարկուին մտին մեղք
յՆս, և՛ի մեղաց մոռացումն, և՛ի մոռաց
մանէն կորուստ յաւիտենական. ուս
տի զորդեգրութիւնն որ յա՜յ էր ջնջե
ցաք պատրանօք մեղացն. ուստի փըր
կութեան ճանապարհն բարձեալ էր
և մահ թագաւորեալ։ Այլ դու տ՜ր
գթացար՛ի ստեղծուածս քոյ ա՜ծային
ձեռացդ, և առաքեցեր զմիածին որ
դիդ՛ի փրկութի՜ աշխարհի. որ եկն և
ծնաւ՛ի ս՜բ կուսէն՛ի մեր նմանութի՜ս։
Արդ՝ յիշեա՛ զգինս արեան քոյ. և փըր
կեա՛ ի ձեռաց նեղչաց ըզհաւատա
ցեալս անւան քում։ Ձգեա՛ զամրա
ծածուկ աջ քո՛ի վ՜ր բանաւոր փա
րախիս այսորիկ. և մի՛ տար զժառան
գութի՜ քո՛ի բնակութի՜ անհաւատից։
Տուր տ՜ր անձանց մերոց մասն ժա
ռանգութեան՛ի վերինդ երուսաղէմ.
զի վ՜ս քոյ մեռանիմք զօրհանապազ։
Լուր տ՜ր ձայնի աղօթից մերոց, և
խոնարհեցո՛ զունկն քո՛ի մաղթանս

ծառայից քոց, բարեխօսութ՟ն սրբոյ
կարապետին և մկրտչի ։ Ի սմանէ
դևք պատկառեսցին, ոչ իշխելով դըժ
րել սպասաւորաց սորա ։ Եւ որք
գայցեն՝ ի սա՛ վ՟ն կարեաց անձանց իւ
րեանց, ողորմեսցիս նոցա և բժշկես
ցես յիւրաքանչիւր ախտից ։ Եւ որք
հաւատով յիշեն զանուն ս՟բ եկեղե
ցւոյս՝ ի նեղութ՟ն իւրեանց՝ կամ՝ ի
վիշտս՝ կամ՝ ի ցանկութ՟ն չարեաց՝
կամ՝ ի լլկմունս դիւաց՝ կամ՝ ի գե
տավիժութ՟ն՝ կամ՝ ի գազանաց բե
կութ՟ն՝ և կամ՝ ի վիշտս անհնարինս
որոգայթից, դու տ՟ր ա՟ծ մեր՝ լըւի
ցես նոցա քոյով մարդասիրութ՟ն դ ։
և ողորմեալ զերծուսցես զնոստ ։
Օի դու կարօղես ամենայնի ։ և քեզ
փառք յաւիտեանս ։ ամէն ։
Եկն ձայն յերկնից որ ասէր՝ եղիցի
ձեզ ո՟պ և կամիք ։ և որ ոք վ՟ն անւան
իմոյ և կարապետիս՝ պանդխտութ՟ն
քաղաքավարիցի, հատուցից նոցա ըզ
հատուցումն բարի յաւուր այցելու

թե՞ • և զմեղս թողից նոցա ։ և դուք ե
կայք 'ի տեղիս լուսաւորս • զոր պատ
րաստեալէք ձերով ճգնութ՞բդ ։ և
լըճեալ սրբոցն երկրպագեցին առ՞ջի
սրբոյ սեղանոյն ։ Եւ արտաքս ելեալ
պօղիկարպոս գնաց առաջի սրբոյ խա
չին և սկսաւ աղաչել զա՞ծ վասն փըր
կութեան աշխարհին՝ զեկեալ թշնա
միսն խորտակել, և մնալ աղքատաց
'ի տեղիս իւրեանց ։ Եւ յանկարծակի
հասեալ զօրքն պարսից • իբրև տեսին
զպօղիկարպոս՝ հատին զպարանոց ն՞ր
և ընկեցին առաջի խաչին ։ և եկեալ
փութապէս 'ի դուռն եկեղեցւոյն՝
տեսին զկրօնաւորսն յարտասուս և
'ի պաղատանս առ ա՞ծ • և յարձակեալ
'ի վերայ նոցա սպանին առ ժամայն
զեօթնեքին խոտաճարակսն • որոց ան
ւանք են այսոքիկ, Թէոմնաս • Պօղի
կարպոս • Սիմէօն • Յոհաննէս • Եպի
փան • Դեմառիոս • Կարեսոս ։ Սոքա
եօթնեքին կատարեցան 'ի զօրացն պար
սից միհրանայ • յամսեանն քաղոցի 'ի

ճժա չորսն

չորսն՝ ընդերեկս աւուրն։ Եւ ին
քեանք զօրքն պարսից մնացին անդ
մինչև ցառաւօտն. բայց զդուռն՝ ե-
կեղեցւոյն ոչ գտին. զի ծածկեաց
տ̄ր՝ ինոցանէ. և սկսան մրճօք հարկա
նել. և զարհուրեալք՝ ի դիւացն փա
խեան՝ ի տեղւոջէն։ Իսկ նշխարք սըր
բոցն կային անթաղ զաւուրս երիս.
քանզի փախեան ամենեքեան. և յետ
երից աւուրց եկն սպասաւորն եկե
ղեցւոյն և թոթիկ հայրն՝ և տեսին
զնս̄ զի վախճանեալ էին՝ յարտասուս
հարեալ տրտմեցան յոյժ։ Ապա առ̄ել
զնշխարս նոցա իջուցին՝ ի մէջ դրախ
տին՝ ի կողմն հարաւոյ, և եդին զնոսա
անդ առ անտօն և կրօնիդէս, որք ե-
լեալ էին՝ ի կեսարիոյ զկնի սրբոյն գրի
գորի. և կանգնեալ խաչ՝ ի վ̄ր նոցա՝
բազմաց բժշկութի̄ լինէր՝ ի տեղւոջն։
Իսկ ոմանք հասեալ յիշխանէն մուշե
ղայ տեղեկանալ վ̄ս զօրացն. և իբրև
տեսին զնոսա կոտորեալս՝ հիացան
յոյժ, և փութանակի երթեալ պատ

մեցին իշխանին մուշեղայ. և նորա լը
ւեալ՝ զերիս աւուրս անկեալ դնիւր
անխօս իբրև զմեռեալս։ Իսկ զօրքն
մատուցին նմա թուղթ քրիստոնէա
կան մխիթարութ՟ և ասեն, Ճշմարիտ
շառաւիղ երանելի՛ յուսոյդ երջանիկ
սպարապետ, մի՛ տրտմիր վասն նոցա.
զի աղօթիւք իւրեանց՝ ամուր աշտա
րակք եղեն աշխարհիս, բարեխօսք
և օգնականք առ ա՟ծ։ Բայց դու առա
ւել գոհութի՟ մատո՛ ա՟յ, որ ՚ի քո ժա
մանակս յայսքան աստիճան առաքի
նութ՟ հասին. և հանգստեամբ փո
խեցան առ ա՟ծ մարտիրոսական տ
րեամբ. յաշխատութ՟ ՚ի հանգիստ. ՚ի
խոտաբուտ կենացս ՚ի դրախտն փափ
կութ՟. գոլով մեզ միշտ բարեխօսք։
Արդ՝ արի՛ սթափեա՛, և զեկեալն ՚ի վր՟
մեր զմիհրան ուղարկեա՛։ Ա՛ւ նորա
իբրև ՚ի քնոյ զարթուցեալ՝ հրամայեց
կոչել առ ինքն զվահան, զոր իշխան
կացուցեալ էր տարօնոյ, մինչ ինքն
մարզպան էր. և ասէ ցնա, որդեա՛կ վա

հան՝ գիտես դու զաւուրս կենաց
իմոց. զի այս ՃԻ ամ է՝ որ ես պատե
րազմ եմ մղեալ. և սլաքով սրբելեմ
զքիրտն ՚ի ճակատէս։ Իսկ այժմ ծեր
եմ և դողդոջոտ. և օգնական իմ ածէ
և դու. և այլ ոչ ոք։ զի որդին իմ մե
ռաւ երկոտասանամեայ։ Արդ՝ դիր
որդեակ զայս ՚ի մտի քում. եթէ վի
եկեղեցւոյ մեռանիս՝ մարտիրոս ես։
Իսկ եթէ ՚ի վերայ մարմնաւոր ընչից
ինչանես ՚ի մարտ, և այն գործ քաջու
թեէ։ Օի ես այլ ժառանգ ոչ ունիմ.
և երկիրս քեզ եղիցի և զաւակի քում։
Արդ՝ արի և գնա և իմաստութեամբ
որսա զնա. և ՍԲ կարապետն եղիցի
քեզ օգնական և պարիսպ. և աղօթք
ՍԲ կրօնաւորացն յաջմէ և յահեկէ։
Եւ վահան յանձին կալեալ զիրսն
սկսաւ դեսպանս կազմել և ուղարկել
առ միհրան. զի հաշտեսցի և գնասցէ։
Իսկ նա ասէ, ոչ. այլ մինչ զիշխանն
մուշեղ կալեալ տարայց առ արքայն
պարսից Եւ վահան առաքեաց և ասէ,

ՃԺԴ եթէ

եթէ զերկիրս ինձ տաս իշխանութ՟ն,
ես տամ զիշխանն մուշեղ՚ի ձեռս քո.
և ես կամիմ գալ առ քեզ ապրստամ
բութ՟ն ՚ի նմանէ , և հատանել զեր
կիւղն ՚ի մէնջ։ Եւ նորա արձակեալ
կոչեց զնա փութով։ քանզի յօժար էր
իրացն. և ինքն իջանէր՚ի մուշնաւան.
իսկ մուշեղ յամուրն ողկան ։ և այն
զօրքն որք զկրօնաւորսն կոտորեցին՝
անցեալ յաստեղօն ամուրն՝ կային
աւուրս երկուս և ոչինչ կարացին
առնել՝ ապա երթեալ կացին առ միհ
րան. և մատուցին նմա զա՟մ ձև ամ
րոցին. և նա՛ խնդրեաց ՚ի նմանէ զաս
տեղօն ամրոցն ։ ասէ վահան ո՛չ այդ
պէս տէր. այլ տո՛ւր ՚ի ձեռս իմ ՟ի ռ
այր, որ գնամք՚ի վ՟ր ամուր բերդիցն,
ուր մտերիմք նորաեն և դանձքն.
գուցէ բառնայցեն և չտայցեն՚ի ձեռս
իմ, ապստամբեալ զիս կարծելով ։
Այլ ա՛յժմ երթիցուք նախ յօձ քա
ղաք և յա՛յլ ուրեք ։ Եւ միհրան տը
ւեալ՚ի ձեռս նորա ՟ի հազար ընտիր

ՃԺԵ առն

առն և ձիոյ. և իբրև գնացին 'ի դուռն
յօձ քաղաքին, դարան մահու գոր
ծեալ վահանայ բանս արար քաղա
քին իներքս առնուլ զզօրսն պարսից.
և քանզի մերձէր մուտ քաղաքին՝ 'ի
ժամուն սակաւք մտանէին. և որք 'ի
դուռն անցանէին՝ զայն 'ի տուն առ ել
'ի զգեստուցն կողոպտէին. և զգը
լուխն կտրեալ արտաքոյ պարըսպին
յաներևոյթ տեղիս ընկենուին. և 'ի
դ̅ռ̅ այրէն յիսուն միայն թողեալէր 'ի
գեօղն կոչեցեալ հարցս: Եւ պատ
ճէր ետ նոցա թէ յորժամ զձեզ ու
ղարկեմ 'ի միհրան, գնացէք և այլ
զօրս ածէք. և արարին այնպէս: զի
գնացին 'ի միհրան և առին 'ի նմանէ
բ̅ հազար այր ընտիր և եկին առ վա
հան. և նա այնպիսի գործ հնարեաց՝
զոր ոչ գիտացին պարսիկքն:

Որդ՝ յորժամ մօտեցան 'ի դուռն
քաղաքին՝ տըճեալ վահան քաղաքա
ցեացն զպարսից զօրաց զերիվարսն
և զհանդերձսն՝ 'ի դուրս կոչէր զն̅ս̅.

ՃԺԶ և

և խրատ ետ եթէ՝ յորժամ՝ նոքա ըզ
ձեօք հային՝ դուք միաբան՝ ի քաղաքն
դիմեցէք • և՝ ի ներքս մտեալ զյաղ
թութեան փողն հնչեցէք • և զդուռն
քաղաքին իբաց թողէք • զի կարծի
ցեն թէ առին զքաղաքն • և արարին
այնպս։ Լ՝ Ը իբրև տեսին պարսիկքն՝
թէ դիմեցին՝ ի քաղաքն, խնդացին յոյժ՝
և դիմեցին ինքեանք ևս՝ ի քաղաքն և
սկսան մտանել՝ ի նա՛ • իսկ վահան փու
թով ընդ առաջ եկեալ զօրացն՝ աւե
տիս տայր նոցա և ի այր՝ ի պարսիկ
զօրացն աւետաւորս առաքէր առ
միհրան թէ առա՛ք զքաղաքն • և ինքն
դարձաւ զհետ զօրացն պարսից ։
Լ՝ Ը իբրև մտին բազումք՝ ի քաղաքն
և այլքն դեռ մտանէին՝ սկսան կաս
կած առնուլ զիրացն • և կամէին յետս
դառնալ • և զհետ մտեալ վահանայ
սկսաւ կոտորել զնոսա և՝ ի մօրսն լը
նուլ ։ և ինքն աստի և քաղաքացիքն
անտի ի այր մօրահեղձ արարին • և
զայլսն՝ ի քաղաքն արգելեալ տայր կըտ

ՃԺԷ

րել զգլուխսն և 'ի պարիսպն հանել։
և համար արարեալ յաւուր յայնմիկ
սպանելոցն՝ գտին վեց հազար գլուխ։

հինգ միայն պակաս։

Եւ հրամայեաց զամենեցուն ըզ
քիթսն և զթլփատսն կտրել։ և ինքն
առեալ զզօրս իւր արս է հարիւր՝
գնաց 'ի մուշ։ և ՂԾ թողեալ 'ի յանցս
մեղտայ։ և ԲԾ այր աշտենաւոր թո
ղեալ 'ի սանասայի ծմակն։ և ինքն ԲԾ
առեալ գնաց 'ի մուշնաւան 'ի միհրան։
Եւ մտեալ 'ի սենեակն խօսեցաւ ԸՆ
նմա այսպէս, ես փախստական եկի
առ քեզ 'ի զօրացն։ զի ոչ 'ի քաղաքն
թողին զիս և ոչ աւարամասն ետուն
մեզ։ այլև զիմ զօրս 'ի քաղաքն արգե
լին։ և ես գամ աւասիկ փախստա
կան։ Իսկ միհրան խորհեցաւ ուղար
կել 'ի վերայ նոցա հազար այր։ և նա
ասէ՝ և 'ի քէն իսկ ապստամբեալ են
և զաւար քաղաքին և զկապուտ՝ ա
ռեալ կամին անցանել 'ի յոյնս։
Եւ բարկացեալ միհրան առաքեաց

ՃԺԸ 'ի

'ի վերայ նոցա երկու հազար այր. և
վահան խրատ տայր զօրացն՝ 'ի գիշե
րի մի անցանել ընդ գետն մեղտայ.
այլ իջևանս առնել և 'ի վաղիւն ապա
գնալ. գուցէ ոք թշնամի յարձակի
ցի, և դուք չէք ընտել վայրուցն։
Եւ ասէ ցնոսա, հազար այր գնացէք
ընդ ծմակն, և հազար ընդ դաշտն.
և ետ նոցա առաջնորդս. և ինքն ել
'ի միհրանայ գնալ ուղարկել զնոսա։
Եւ իբրև գնացին յայն տեղի՝ ուր
բաժանեին՝ առաքեաց հարիւր այր
զհետ նոցա որ ընդ ծմակն գնացին.
և ինքն առեալ ճ այր գնայր զկնի նց։
և իբրև գնացին յեզր գետոյն մեղտայ
յայնկոյս՝ իջոյց զնոսա 'ի քուն առնել.
և ինքն 'ի պատրաստի արարեալ զդա
րանակալսն՝ հրամայեաց ծառայիցն
կտրել զերիվարսն արօտոյ պատճա
ռաւ. և անհոգս արարեալ զնոսա
յանկարծակի հընչեցուցին զփողսն
յետոյ և յառաջոյ. և 'ի մէջ առեալ
իսկոյն բարձին զգլուխս նոցա և ըն

կեցին 'ի գետն. յորոց և ո՛չ մի ոք կա
րաց զերծանիլ. և զերիվարսն հրա
մայեաց 'ի ծմակն տանիլ. և մինչ նոքա
զայն պատերազմն վրճարեցին և յա
ռա՛ջ եկին այլոցն, և նոքա դեռ չէին
եկեալ 'ի ծմակն. և կացին մնացին
մինչև նոքա եկին և յայնկոյս անցեալ
իջին. զի զայն խրատ տըւեալ էր վա
հան։ Եւ իբրև անհո՛դս եղեն՝ ապա՛
կալեալ զխելս կամրջին՝ ձայն սաս
տիկ հնչեցուցին շուրջանակի զնո
քօք. և սկսան անխնայ կոտորել ըզ
նոսա. և մի 'ի նոցանէ թաքուցեալ
'ի մօրն և հեծեալ յերիվարն փախ
չէր 'ի մուշ. որոյ զհետ մտեալ եր
կուց ոմանց՝ և անցեալ յայնկոյս գե
տոյն ըմբռնեցին և ջախջախեցին ըզ
գլուխ նորա։ Եւ միւս ընկերն ա
ռեալ աւազ տայր ցմիւսն և ասէր,
պարսից խորտկարարդ, ա՛ռ զաղս.
և կոչեցաւ անուն տեղւոյն՝ առ աղս
մինչև ցայսօր. որև անւանեցաւ
'ի վահանայ։

Նսկ վահան ածեալ զոմանս 'ի նցնէ
'ի մօրն, և այլ ոչ կարացին հանել ըզ
նոսա անտի՝ այլ հեղձան 'ի նմա. և
որք 'ի ցամաքնէին՝ կտրեցին զգլուխս
և զթլփատս նոցա և պահեցին. և ա-
պա յետոյ զգլուխսն 'ի մօր անդր և
'ի դաշտն ընկենուին. և զ ԲՁ հազար
երիվարսն ետ տանել յողնու բերդն.
և ինքն 'ի վաղիւն եկն առ միհրան:
Եւ հրամայեաց ծառայիցն ճաշ առ
նել՝ և զմիհրան կոչել. և նա վս խօ
թութեն 'ի սենեակն եմուտ, և զնա
միայն թողոյր 'ի ներքս. և վահանայ
դռնապան լեալ՝ զեկեալ իշխանսն
դարձուցանէր 'ի դրանէն՝ ասելով,
հայոց մարզպանն չկարաց գալ 'ի ճաշ:
Եւ նոցա ժողովեալ 'ի տաճար մի ԸՂ
գինի մտին. և վահանայ առեալ զմա
խաղն յորում քիթքն և թլփատքն
կային, ետ բերել առաջի միհրանայ.
և նա տեսեալ զարհուրեցաւ. և ասէ,
զի՞նչէ այդ, զրոյց տուր ինձ. և պատ
մեաց նմա կարգաւ զամենայն, և ոչ

մի բան թաքոյց 'ի նմանէ զոր ինչ ա-
րարեալէր։ Եւ բարկացեալ միհրա-
նայ՝ էառ զտէգն 'ի ձեռանէ ծառային
և կամէր հարկանել զվահան. և նոր
ձգեալ զձեռն 'ի սուրն որ կայր ա-
ռաջի՝ կտրեաց զթլփատն միհրանայ
և եդ 'ի բերան նորա, ասելով. դո՛ւ ես
նախատեր զաւծ՝ դո՛ւ ես որ զկրօնա
ւորն իմ զսիւնան աշխարհէ՝ ետուր
սպանանել։ Եւ կտրեալ զքիթն ցու-
ցանէր աշացն. և պատառեալ զփորն՝
ետ ծառային իւրոյ հանել զբերդն և
դնել 'ի բերանն։ և հարեալ զդանակն
'ի փորն ետ թողուլ 'ի ցից։ Դայց մինչ
լոկ զթլփատն կտրեալէր՝ ասէ,
տուր բանից նիշ և պատուէր 'ի պար-
սիկն որ յապահունիս, և ես ապրե-
ցուցանեմ զքեզ. և նա ետ նշան բա-
նից և պատուէր բազում երդմամբ.
զոր երկոքեանն միայն գիտէին։
Եւ իբրև ասաց զիրն՝ ապա կըտ-
րեալ վահանայ զգլուխ նր, ետ ծա-
ռայիցն առնուլ զարիւնոտ զգեստ նր

և պահել. և զգետինն մաքրեալ յարե
նէն՝ կողմնեցուցին զնա 'ի մահճին
և ծածկեցին քնոյ պատճառանօք։
Եւ ինքն ելեալ կոչեաց զպարսիկ
դպիրն միհրանայ 'ի սենեակն, և ետ
գրել 'ի միհրանայ ողջոյն և բանից նիշ.
եթէ յետ երից աւուրց ել 'ի բլուրդ
որ 'ի վերայ կոթ ձորոյ՝ հազար ա-
րամբ միայն. զի տեսցուք զմիմեանս.
և գրեաց դպիրն ոպ ասաց վահան.
և եդ 'ի վերայ զմատանին միհրանայ։
Եւ կոչել 'ի հաւատարիմ ծառայիցն
արս յիսուն՝ ետ տանել զթուղթն
առ վաշիր որ զհազար այրն ունէր.
որք և առեալ գնացին։ Իսկ վահան
կոչեաց զնըմիրակն և ասէ, երթ կո
չեա զայս անուն իշխան. և երթեալ
կոչեաց. և իբրև գայր իշխանն և մտա
նէր ընդ փողոցն խաւարչտին՝ զայր
աստի և անտի կային. և մինչ կամէր
մտանել ընդ սենեակն՝ աճապարեալ
կալան զփողիցն զի մի ձայն բարձցէ
առ միւսն. և հարեալ դանակով 'ի

սիրտ նորա՝ ձգէին՝ի միւս յարկն. ուր
և զնըմիրակն և զդպիրն վ̅ն̅ պատճա
ռոյ չետ տանել՝ի բանտն: և ինքն խա
բէութ̅ի̅ կոչէր զիշխանսն՝ի խրհ̅ւրդ,
և ենեգութ̅ի̅ այնպէս առնէր: և սպան
յաւուր յայնմիկ իշխանս ութսուն
և զ̅: Եւ իբրև վըճարեցան իշխանքն՝
գնաց ինքն՝ի տաճարն ուր զօրքն էին
ժողովել. և ետ հանել արտաքս զիւրն
և զայլ գաւառի մարդիկսն. և ինքն
սկսաւ վտանգել զմնացեալ զօրսն ա
սելով, արժանէր ձեզ զմարգարտեայ
պսակն մարզպանին գողանալ. արդ՝
հրամայեալէ ձեզ ամենեցուն մերկա
նալ, մինչև ցուցանիցէք զնա:
Եւ հանել զհանդերձսն ամենեցուն
արգել զնոսա յերկոսին տաճարսն
ո̅ թ̅ճ̅ ութսուն այր. և փակեալ ըզ
դրունս տաճարացն ետ բերել զգը
լուխն միհրանայ. և կախեալ ը̅ երդն
ցուցանէր նոցա և ասէր, այս այն գը
լուխնէ՝ որ խորհէր զսրբոյ կարա
պետի զհիմն իվեր առնել, և զկրօնա

ճ ի՛դ Հորսն

ւորսն հրով այրել։ Եւ զայս ասա
ցեալ հրամայեաց վառել զերկոսին
տաճարսն, և ասէ՝ դուք ինձ վնաս
շատէք արարեալ, որք զտաճարսն իմ
այլ այրելէք տրճեալ. բայց թէ կամի
ա̅ծ և ս̅բ կարապետն՝ ես զայս փայտ
ընդ ձեր և ընդ ձեր թագաւորին կա
ռափն հանեմ. զի ես աշխատեալ եմ
և զտաճարս շինեալ. և դուք մերկէք
և ցրտացած։ Արդ՝ վասն իմ մեղացն
թողութե̅ և վ̅ն իմ հարանցն՝ ջեռա
ռուք այսօր և մի ամաչէք. և տունդ
այդ գերեզման ձեզ եղիցի. շնորհե
լով պարսից արքային. և այնքան բոր
բոքիւր բոցն ճարպովն, մինչ զի քա
ղաքն ա̅մ արբեալ եղև 'ի հոտոյ ճեն
ճերացն։ Եւ ինքն ժողովեալ զկա
պուտ նոցա և զգանձս՝ ետ տանել
յամուրն ողկան. և զիշխանն մուշեղ
ետ ածել 'ի քաղաքն. և ինքն առեալ
երեք հազար այր՝
գնաց ընդ առաջ
վաշիրայ։
ճիեւ Եւ

Եւ երթեալ 'ի վր̄ լերինն ընդ երիս
դիհս դարան գործեաց. և զդպիրն
և զնըմիրակն առաքեաց առ վաշիր զի
կոչեսցեն զնա գալ անդր. և գնացել
նք̄ կոչեցին զվաշիր, որ իջեալէր եզր
ծովուն. բայց նըմիրակն և դպիրն
ո՛չինչ գիտէին զիրացն. զի վահան ո՛չ
եթող զնոսա մօտիլ 'ի զօրսն. և յոր
ժամ այրեաց զնոսա 'ի տաճարին. 'ի
պատճառս իրաց՝ յայլ տեղիս առա
քեալէր զնոսա, զի մի՛ գիտասցեն
զիրսն: և զի զհանդերձս իշխանացն
տեսեալ՝ կարծէին թէ
միհրանեանքնեն:

Բ՛րդ՝ իբրև գնացին և զվահանայ
ասացեալսն պատմեցին նմա ո̄պ թէ
յերեսաց միհրանայ, առեալ վաչիրայ
արս ո̄ հարիւր, եկն 'ի վերայ լերինն:
և իբրև մերձեցաւ 'ի տեղին՝ եթող
անդ արս հարիւր իբացէ, վասն այլոց
թշնամեաց. և եկեալ եմուտ 'ի վրանն
առ վահան. կարծելով թէ միհրանէ:
Եւ իբրև ետես զնա վահան՝ ասէ
ճիզ ցնա,

ցնա, վա՛շիր, զի՞նչ եդիք 'ի մտի. 'ի
պարսից հաճա՞տս կամիք դարձուցա
նել զերկիրս հայոց։ և հրամայեաց
արգելուլ զզօրսն 'ի հեռուստ. և ըզ
վաշիր գանեաց յոյժ, մինչև առցէ 'ի
նմանէ նշան բանից կոչելոյ զզօրսն.
և 'ի հարկէ՛ ցաճոցն ետ նշան բանից
առ զօրապետսն և առ իշխանսն գալ
փութով 'ի տեղին։ Եւ կաշառեալ
զպարսիկ դպիրն ետ գրել ա՛յնպէս՝
թէ գայցեն 'ի վաղիւն. զի յո՛յնք ասէ
գալոցեն 'ի վերայ մեր. և տըճեալ ըզ
մատանին վաշիրայ՝ ուղարկեաց ըզ
թուղթն յայն զօրսն՝ որք հեռի՛էին.
և դարձուցեալ զկոչնականսն յայն
զօրսն որք յեառ՛յնէին, և կոչեցին ըզ
նոսա։ Եւ կոչեալ զիշխանսն մի մի 'ի
խորան իւր՝ կտրէր զգլուխս նոցա.
զոր ո՛չ ոք գիտաց. մինչև զերծեալ
ոմն 'ի նոցանէ անկաւ 'ի բանակն։ և
իբրև ետես վահան թէ յայտնեցան
իրքն՝ ա՛զդ արար այնոցիկ որք 'ի դա
րա՛ննէին. որք յարուցեալ յետո՛ւստ

կողմանէ՝ փախստական արարին զնս
'ի բերդակոյս կոթ ձորոյ։ Եւ որք
բուն յետինքնէին 'ի դարանի անդ՝
չյարեան իսկ. և արք բերդին ընդ
դէմ ելեալ քարամբք և գլովք կոտո
րեցին զնոսա անխնայ. և եղեն փա
խըստական յապահունիս արք ՃՄ, և
իմացեալ դարանակալացն յարեան
'ի վերայ և կալան զնոսա։

Որդ՝ 'ի վաղիւն սկսան զօրքն գալ
'ի նոյն տեղի լերինն. և վահան յա
ռաջ գնացեալ ասէր՝ իջիք տստ ամե
նեքեան և թողէք զերիվարսդ արա
ծիլ մինչև յերեկոյն. և յերեկոյին ա
պա իջանեմք 'ի վր՝ զօրացն յունաց. և
արարին այնպէս։ Եւ դարանակալքն
դիմեցին 'ի վր՝ նոցա և կտրեցին զերի
վարսն 'ի զօրացն և փախստական ա
րարեալ զնս՝ ընդ արածանի՝ հանին
'ի քարքէ. և զօրացն պարսից տեսեալ
զիրսն՝ աղաղակեցին և ասեն՝ վայ մեզ,
զի կորեաք. և եդաւ անուն գաւա
ռին կորեայ լերին։ Եւ վահան առ՝ել

զզօրսն իջուցանէր 'ի բուն Ճորն. և
յարեան դարանակալքն աստի և ան
տի, և 'ի մէջ առեալ կոտորեցին զնն.
ոչ ողորմելով ումեք: և հրամայեաց
նց թողուլ 'ի նոցանէ արս խ. զի զրու
ցատարք լինիցին պարսից արքային:
Եւ տրէեալ նոցա զգլուխն միհրա
նայ տանիլ առ Թագաւորն և ասէ,
այս մարզպան յորժամ եկն յերկիրս
մեր՝ հակառակեալ զօրքն ը̄ միմեանս
գնդի խնդրէին, և ոչ կարացին գտա
նել. ապա՛ քանզի յոյնք Թշնամիքէին
մեզ՝ 'ի նն̄ ոչ իշխեցաք գնալ, այլ Ճեզ
ընդ ակամբէաք. և Ճեր զօրացդ գըն
դի ոչ կայր. ապա կտրեցաք զգլուխդ
զայդ և խաղացաք: ապա՛ լսեցաք Թէ՝
'ի շահաստանայ եկեալէք 'ի բօստր
քաղաք, որէ երկիր տափարակ և
դաշտաձև. և գիտեմ որ գնդի խա
ղայք 'ի նմա. առէք զգլուխ քեռոր
դւոյն Ճերոյ, և եղիցի Ճեզ գնդի յազ
գէ յազգ: Եւ իբրև գնացին արքն
և տարան և զգլուխն միհրանայ առ̄ջի

թագաւորին և ասացին զբանսն, խռո
վեցաւ յոյժ և ամաչեաց զամօթն
յաւիտենական ։

Եւ 'ի միւսում ամին խրոխտացեալ՝
այլ զօրս առաքեաց 'ի տարօն ։
'Իսոյն ամի՝ վանք սրբոյ կարապե
տին որ յիննակնեաննէր՝ փլաւ. զի
շարժ խիստ եղև. զոր մուշեղ իշ
խանն տարօնոյ տրւեալ գանձս բա
զումս հրամայեաց քարակոփս շինել.
բայց ոչ ժամանեցին շինել որպէս ար
ժաննէր՝ վասն պատերազմին ։
'Իսոյն ամի շինեաց զՆբ կարապետն
և ինքն վախճանեցաւ. և կայ առ ար
ծրունեաց 'ի կողմն արևելից
ճակատուն ։

Յետ վախճանելոյն մուշեղայ՝ նրս
տաւ վահան իշխանն մամիկոնէից
տանն, և եկն 'ի վանս գլակայ. և տօն
ցնծութեան կատարէին 'ի Նբ կարա
պետն բազում քահանայիւք և եպիս
կոպոսօք ։ Եւ ազատեաց եկեղե
ցւոյն երկոտասան գեօղս. ջնջե

լով զանճանսն յարքունա
կան դիճանէն ։

Ի նոյն ամին վախճանեցաւ և երա
նելին Թոթիկ հայր գլակայ վա
նիցն. և կայ 'ի Թաղման'ի հարանց բը
լուրն, որէ ընդաջմէ եկեղեցւոյն ը̄
աւետեաց բլուրն ։ իբրև ա՛կն'ի միջի ։
Եւ նստաւ յաթոռ նորա՝ մանուկն
ստեփաննոս, որդի իշխանին
արծրունեաց ։

Սա՛ բազում ուղղութ̄ի գործեաց
'ի գաւառն տարօնոյ. և վերագոյն
ընդունէին զնա՛ քան զեպիսկոպոս.
զի էր հա՛յր որբոց փառաւոր և ս̄բ
վարուք. և ունէր ընդ ձեռամբ իւ
րով գ̄ ճ̄ ղ̄ ը̄ կրօնաւորս ։ և վ̄ ս̄բ և
պարկեշտ վարուցն՝ ամենեքեան իբրև
զյօհաննէս կարապետն ընդունէին
զնա ։ Սա՛ խնդրեաց'ի ս̄բ կարապետէն
կապել զբերան գազանացն որք զլու
սաբերսն ուտէին. և եղև այնպէս ։
Սա՛ յանդիմանեաց զիշխանն հարքայ,
որ ունէր զկին եղբօր իւրոյ. և ածե̄լ

ճլա 'ի

'ի հաճանութիւն, կտրեաց 'ի կնոջէն և
արար զնա կրօնաճոր. և ետ նմա
շինել եկեղեցիս 'ի թիլնաճան։
Փառք ս̅ը̅ երրորդութեանն ամէն։

✠

Գլուխ Երկրորդ. Սասն գալստեան
վախթանկայ երեսուն հազարաճ 'ի
տարօն։ Որև շինեաց զպորպէս քա
ղաք, և զբերդն գահար։ 16

Երև խաղայր թագաճորն պար
սից 'ի վ̅ր̅ յունաց երկրորդ ան
գամ, 'ի միտ ածեալ զմահն միհ
րանայ քեռորդւոյ իւրոյ, առա
քեաց զվախթանկ զնորին հօրեղ
բայրն երեսուն հազարաճ 'ի տարօն։
Որոյ եկեալ յապահունիս՝ նստի
անդ, և առաքէ հարկապահանջս 'ի
հարք, 'ի հաշտէնք, և 'ի մուշ, խնդրել
'ի նոցանէ զարքունական հարկն. և
դրեցին առնա՛ իշխանքն երկրին և ա
սեն, եթէ վահան լիցի քեզ հարկա

տու, լինիմք և մեք՝ և տամք զհարկն.
ապա թէ ոչ՝ ամօթալի գնալոցես
աստի։ Բռոր խրոխտացեալ վախթան
կայ՝ թողու կողմնապետս երկրին
ապահունեաց՝ և սաստիկ քինու փը
քացեալ՝ գայ հասանէ՛ ի գլուխ տա
րօնոյ։ Եւ իբրև եկն՝ ետես անդ
տեղիմի վայելուչ և արձակ, և սկսաւ
անդ շինել քաղաք և տնկել այգիս և
բուրաստանս. և կոչեաց զքաղաքն
պորպէս՝ յանուն կնոջ իւրոյ պորպէի։
որ ՚ի մեր լեզուս համեղ կոչի։
Եւ զպարսկական ատրուշանն փո
խեաց՚ի դուռն մատրանին, զոր հիմն
արկեալէր սրբոյն խսահակայ պար
թևի մեծի։ Եւ ելեալ ՚ի վր՞ լերինն
տօրոսի՝ շինեաց անդ ամրոց, և անւա
նեաց գահար. զի անդ գահավիժե
ցան ոմանք երկուցեալ ՚ի վայրի գա
զանացն, կարծելով զնսսա թէ՚ի պար
սից հեծելոցն իցեն։ Եւ սա և՚ի վր՞
գոռոզ լերինն, և շինեաց անդ աւան,
և անւանեաց զնա գրգռոս՝ յանուն

որդւոյ իւրոյ գրգռոսի։ Եւ գրեաց
թուղթ առ վահան, որ ունէր օրինակ
զայս։ Քաջ և հզօր բազկիդ վահա
նայ հսկայի սպարապետի՝ 'ի դիցն
օգնութեան ողջոյն։ Թէպէտ ընդ մահն
միհրանայ քեռորդւոյն իմոյ տրտմե
ցաք, սակայն ընդ քո իմաստութիւդ
կարի յոյժ զարմացեալ եմք։
Եւ արդ՝ ես վասն սիրոյ և խաղաղու
թեան եկեալ եմ. եկ և դու առիս սի
րով և երդմիր ինձ՝ տալ զհարկն դի
մոսական և հնազանդ կալ արքային,
և այլ ոչ և ս մտանել 'ի չարութիւն վասն
նորա. և ապրեսցիս, մնալով 'ի փառս
պատմոյ մեծի իշխանութեան հայոց։

ողջլեր։

Եւ վահան գրեաց նմա պատաս
խանի այսպէս։
Վատ և թոյլ անձինդ վախթանկայ,
և խոզից քոյոց դասուց՝ որք զօրն ող
ջոյն զաղբս ճաշակեն. Թէպէտ ընդ
մահն միհրանայ խնդացի, բայց զքո
անմտութիւդ յոյժ լացի։ Որ զնորա

մահն լսեցեր և զիմ կորովութիւնս
ծանեար՝ զոր ետ ինձ ա̅ծ , և իշխե
ցեր յիմարութ̅ի̅ գալ և դու՝ ի վերայ
երկրիս հայոց։ Արդ՝ եթէ սէր եկիր
առնել ընդ մեզ, զկինդ ընդ է̅ր ածեր
զհետ. մի թէ որդի̅ս խնդրես յարանց
մերոց։ Կամ եթէ սիրոյ պատճառաւ
եկիր՝ զքաղաքդ և զամրոցդ ընդ է̅ր
շինեցեր։ Այլ գիտեմ, զի սո́ւտես.
և իբրև զշուն կծկիս։ ա́րդ՝ մի՛ ընդ
մահու փոխեր զկեանս քո. այլ ել
յերկրէս և գնա́ խաղաղութեամբ յեր
կիրդ քո։ Այլա թէ ո́չ՝ զմահն որ ընդ
անձն քո անցանելոցէ՝ տեսցէ ա̅մ եր
կիր։ Եւ բարկացեալ վախթանկայ
ընդ նախատական բանսն վահանայ՝
ետ՝ ի ձեռն ռահանայ արս զ̅ հազար
և առաքեաց՝ ի մուշ՝ ի վ̅ր̅ վահանայ։
Եւ վահան իմացեալ զիրսն (զի ազ
դեցին նմա ոմանք թէ աւասիկ գա́յ
ռահան՝ ի վերայ քոյ,) գիշերագնաց
եղեալ հասանէ նոցա՝ ի ծմակն, ուր
իջեալ կային անհոգ. և յանկարծակի

ՃԼԵ յար

յարձակեալ 'ի վր՝ էհար զնս՝ սրով.
և պարսիկքն ոչ կարացին ունել
զերիվարսն. քանզի որդին վահանայ
սմբատ 'ի մէջ անցեալ գաղտաբար
կտրեաց 'ի նոցանէ չորս հարիւր երի
վարս և անցոյց յայնկոյս արածանու
'ի կողմն հաշտենից. և բ՝ ճ՝ երիվարս
'ի նոցանէ աճարամասն ուղարկեաց
'ի ս՝բ կարապետն. զի այն էր նոցա
տուն հայրենի. և սմբատն արի՝
անդ էր կնքեցեալ։

Եւ վահանայ տըճեալ զնս՝ մօրացն՝
զբազումս կոտորեաց. և մերկացու
ցեալ իշխանն հաշտենից արս բ՝ ճ՝ 'ի
մօր անդր ընկղմեաց։ զի ունէր առ
ինքն արս վեց հարիւր։ Իսկ իշխանն
պալունեաց բ՝ հազար և բ՝ հարիւր։
Իշխանն արջուց՝ չորս հազար։
Իշխանն եղնուտի՝ հինգ հազար։
Իսկ ինքն վահան՝ ութ հազար։
Եւ որդի նորա սմբատ՝ վեց հազար։
Ընդ ա՝մ զօրք ի՝ ե՝ ռ և ութ հարիւր։
Այս ա՝մ զօրք կային ընդ ձեռամբն

վահանայ։ Բայց բաժանեալ էր զնա,
և կողմնապա՛հս թողեալ ամ տեղեաց
և առ ինքն կայր յամուրն յայնմիկ զ
հազար։ Եւ բազում ոճիրս գործեց
անդ իշխանն հաշտենից. զի աճապա
րեալ կտրեաց զգլուխն ռահանայ.
և զօրքն 'ի փախուստ դարձեալ՝ նե
ղեին յոյժ. որք յաղաչանս դարձել
հա՛րկս խոստացան տալ նոցա։
Եւ վահան ասէ՝ ցնոսա, տուք ինձ
զգլուխն ռահանայ՝ և թողում զձեզ.
և զօրքն 'ի բազում տարակուսանս
լեալ՝ խնդրէին զգլուխն ռահանայ և
ո՛չ կարէին գտանել 'ի միջի իւրեանց։
Ապա կալեալ զորդի նորա զվահ, ե-
տուն 'ի ձեռս իշխանին հաշտենից. և
նա՛ յառաջ խաղացել ասէ, կամ տո՛ւք
մեզ զգլուխն ռահանայ, կամ զգին
գլխոյ նորա երեսուն հազար դահե
կան։ որոց անհնարինս մտեալ՝ ե-
տուն զգին գլխոյն ռահանայ՝ և ին
քեանք սկսան փախչիլ։ Իբրև ետես
վահան թէ գնան ամբողջ, նախանձել

ճլէ զնա

զնախանձն ա̅յ՝ յարձակեցաւ՛ ի վերայ՝
և սկսաւ կոտորել զնոսա. և նոցա
աղաղակեալ ասեն՝ առ ինչ դարձայք
անդրէն՛ ի պատերազմ ով աւելախօսք՝
և կոչեցաւ անուն տեղւոյն առ ինչ։
Եւ տարածեալ զն̅ ՚ի դաշտի անդ՝
կոտորած սաստիկ գործեցին. յորոց
արք հինգ հարիւր հազիւ կարացին
փախչիլ. որք երթեալ պատմեցին վախ
թանկայ զամենայն եղեալսն։ և նորա
բարկացեալ՝ հրամայեաց գլխատել
զնոսա որք դարձան՛ ի պատերազմէն.
և ոչ մնաց ոք՛ ի վեց հազարէ անտի։
Եւ շարժեալ անդրէն վախթանկայ
՚ի ցասումն բարկութե̅ վասն վահա
նայ՝ առաքեաց զասուր ութ հազա
րաւ՛ ի վերայ նորա։ որ եկեալ բանա
կի յեզր մեղտայ և առաքէ առ վա
հան՝ որ ունէր օրինակ զայս։
Ա̅յ չարաբարոյ գայլ վահան, մինչ
գիտես թէ ծառայելոց ես արեաց ար
քային՝ ընդէր այդչափ յանդգնեալ
անամօթիս։ ա՛րդ՝ արի եկ առմեզ և

լեր հարկատու. ապա թէ ոչ՝ մեռա
նիս իբրև զշուն։ Եւ նորա զայս լը
ւեալ՝ էառ հազար այր և զսմբատ
որդի իւր, և գնաց՛ի պատերազմ։ և
իբրև կացին հանդէպ իրերաց՝ սկսաւ
ասուր թշնամանել զվահան և գայլ
կոչել. և նա ասէ, յիրաւ՛ի՛է այդ ա-
նուն իվերայ իմ. քանզի գամ կոտո
րեմ, գնամ և այլվի՛ գամ. և սկսան մար
տընչիլ ընդ միմեանս։ Եւ իբրև խըմ
բեցաւ պատերազմն. ակն կալաւ
սըմբատ որդին վահանայ իվերայ ա-
սուրայ և պատահեա՛ց նմա. և ասուր
տեսել զնա թէ պատանի՛է՝ քամահեց
զնա և ասէ, քարապաշտ հարճորդի՝
՚ի բա՛ցկաց յինէն՝ զի ես պատերազմօղ
արսն անցանեմ. և նա՛ ասէ, ո՛րդի սա-
տանայի՝ յիրաւ՛ի՛է անուն քո ասուր.
զի սուր քո ո՛չէ ինչ. արդ մատուցեալ
լ՝ կտրճիս՝ ծանիցե՛ս զպարտուի՛ քո։
Եւ յանկարծակի զէնս իվեր վերա-
ցուցեալ կտրեաց զգլուխ երիվարին
ասուրայ և յերկիր ընկէց զնա. և յար

ճլթ Ճա

ձակեալ անդէն իվերայ նորա՝ կտրեց
զգլուխ նորին, և իվեր վերացուցեալ
ասէ, փառք քեզ քս̅. փառք քեզ ս̅բ
կարապետ. որ յաղթեցեր հակառակ
որդին քոյ։

Եւ մինչ դեռ զայս ասէր՝ պատեցին
զհայրն նորա զվահան արք ինն. և ոպ̅
անտառս կոփէին զնա անխնայ. և իբրև
սկսաւ վահան պակասիլ՝ ձայն էբարձ
և ասէ, ո՛ւրես որդեակիմ սմբատ,
հա՛ս ինձ յօգնութիւն. զի էր ամաց
ութսուն և երից։ Եւ սմբատ յար
ձակեալ քաջաբար որպէս արծիւ սը
րաթռիչ՝ և ասէ, օգնեա՛ մեզ սուրբ
կարապետ. և անդէն հարեալ զգլուխ
որդւոյն ասուրայ՝ թիկա՛մբն հանդերձ
'իվա՛յր ընկէց. և զայլ ճնացեալսն փա
խըստակ՛ն արար 'ի հօրէն իւրմէ իբրև
զքաջ արծիւ։ Եւ մատնեաց տ̅ր ան
դէն զզօրսն պարսից 'ի ձեռս ն̅ց՝ զորս
մինչև 'ի մուտս արևուն փախըստա
կան արարին. և յութ հազարէն գ̅ռ̅
միայն գնացին առ վախթանկ։ և լըճ̅ել

վախթանկայ լռեաց մինչ 'իմիւս ամն։
Եւ 'ինոյն ամի վախճանեցաւ վահան
վրէժխնդիրն իվերայ եկեղեցւոյն ա̅յ։
որ մինչ կենդանի՛ էր՝ հրամայեաց տա
նել զինքն 'իվանս գլակայ. և կայ անդ
'իթաղման 'իդուռն ս̅բ կարապետին։
Եւ 'ինոյն ամին զօրս գումարեալ
վախթանկայ արս քսան հազար, առա
քեաց առ սմբատ որդին վահանայ և
ասէ՝ կամ եկ և պատերազմիր ը̅ մեզ՝
կամ լեր հնազանդ և տուր հարկս։
Իսկ սմբատ ժողովել արս իննհազար՝
գնաց իվերայ նոցա. և թողեալ հազար
հարիւր այր 'իբլուրն որ կոչի մահու
ագարակ՝ գնաց ինքն ընդ դէմ նորա
իգրգռել զնա։ Եւ վախթանկ առա
քեաց իննհազար այր իվերայ նորա,
կարծելով թէ այն միայն է. և եկեալ
գիշերի պատեցին զնոքօք. և սմբատ
տեսեալ զզօրսն՝ կամեցաւ ելանել և
ինքն գիշերի իվերայ նոցա. բայց ար
գելին զնա քահանայք դրան իւրոյ վս̅
գիշեր լինելոյ։ Իսկ նա ասէ, վստա՛հ

եմ յա՛ծ՝ թէ որով հետև ծառայեալ
եմ նմա միամտութ՛բ և ս՛բ կարապե
տին՝ ոչ թողու մեզ 'ի ձեռանէ։
Եւ ելեալ անդէն 'ի մէջ գիշերի յար
ձակեցան ջահիւք յանկարծակի իվ՛ր
զօրացն պարսից. և տեսին այր մի գի
սաւոր զարմանալի տեսլեամբ, յորոյ
հերացն լոյս փայլատակէր, և զաչս թշ
նամեացն կուրացուցանէր. զոր տե
սեալ քաջն սմբատ՝ ասէ, քաջալերե
ցարո՛ւք որդեա՛կք իմ և մի՛ երկնջիք.
զի սուրբ կարապետն մեզ 'ի թիկունս
կայ՛հասեալ. և ընդ թշնամիս մեր ինքն
մարտնչի. և մի՛ ոք անհաւատալի հա
մարեսցէ զայս, զի ահա՛ ինքեանք ընդ
ինքե՛նս սկսան մարտնչիլ և զմիմեանսն
սատակել. զի տ՛ր պատերազմի ը՛ն ն՛։
Եւ այնչափ կոտորեցին զնոսա՝ մինչ
հեղեղա՛տք ելին յարեանցն. որև թիլ
կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ։
Եւ իբրև դադարեցան 'ի կոտորելոյ
զանչափ բազմութիւն, թողին 'ի նոցանէ
երկու հարիւր այր. զի զրուցատա՛րք

ճիւք

լինիցին այլոցն վասն առն զոր տեսին
'ի գիշերին. զի թշնամիքն եւս տեսին ըզ
նա. եւ ինքն ուղարկեաց զերիվարսն 'ի
մուշնաւան առ որդին իւր որ կոչիւր
անւամբ պապուն. վահան՝ կամսարա
կան. զի զհետեւակսն քղ̄քին հեծ ե̄լս
արասցէ եւ առաքեսցէ փութով:
Եւ կազմեալ նորա հեծեալս երկու
հազար եւ ե̄ հարիւր. հանէ առ սըմ
բատ իշխան հայրն իւր: Իսկ նորա
խոյս տըւեալ աւուրս ը̄. պատրաս
տեց զզօրս իւր. եւ յետ ութ աւուրն
եկն է հաս վախթանկ 'ի դաշտ անդր:
Եւ սմբատ հնարս իմացեալ կտրեց
'ի գիշերի երկու ռ̄ այր 'ի հեծելոցն եւ
անցոյց 'ի տեղի թագստեան յետուստ
կողմանէ պարսիցն. եւ երեք հազար այր
եդ 'ի բլուրն յայսկողմանէ. եւ այսպէս
յերկուց կողմանց գաղտ ռազմ կար
գեաց: Եւ ինքն բաժանեալ զութ
հազարսն՝ կամեցաւ նորօք ընդ առա
ւօտն վաղվաղակի. զի մի գիտասցեն
պարսիկքն զգաղտ դարանսն. եւ փու

թապ՚ի դիմի հարեալ յարձակեցաւ
՝ի վր՞ նոցա ։ և՚ի խմբիլ ճակատուն՝
յաղթեցաւ կողմն սմբատայ ։
Յայնժամ ելեալ քաջն սմբատ՚ի գը
լուխ լերինն՝ գոչեաց իբրև զառիւծ
և ասէ, ո՛ւրեք քաջք և արիք, յառաջ
մատիք ։ և լըւեալ զօրացն դիմեցին
յա՞մ կողմանց՚ի վր՞ զօրացն պարսից ։
և՚ի մէջ առեալ զնա՝ խմբեցան ընդ
իրարս ։ մինչ զի ո՛չ գոյր հնար զմի
մեանս ճանաչելոյ ։ բայց միայն՚ի ձայնէ
փողոցն և՚ի տեսութենէ դրօշիցն ։
Եւ իբրև հարան ընդ միմեանս վախ
թանկ և սմբատ, ասէ վախթանկ, է
հարճորդի՝ թէպէտ զբազո՛ւմս ջընջե
ցեր, սակայն ընկալցիս այսօր զար
ժանիս քո՚ի ձեռաց արանցս քաջաց ։
զի գէշ գէշ պա՞ռելո՛ցեն զձեզ սո՛ւրբ
մեր ։ Յայնժամ սմբատ՚ի ներքս ան
ցեալ կտրեաց զսռնապանս բարձից
նորա, և կարեվէր խոցեալ զնա՝ մերձ
տարաւ յընկենուլ յերկիր ։ Իսկ վախ
թանկ ձգեալ զտէգն է հար՚ի կո՛ւրծս

նորա. և ցցեալ զնա ոչ կարաց անցու
ցանել 'ի ներքս։ Ընդոր փութացեալ
քաջն սմբատ՝ ձայն էբարձ և ասէ,
ս̅բ̅ կարապետ յայտնեա՛ և այսօր ըզ
քեզ ծառայից քոց. զի վ̅ս̅ քոյ մեռա
նիմք 'ի վ̅ր̅ հաւատոցս ք̅ի։ և հարեալ
զտէգն 'ի թիկունս նորա, անցոյց ընդ
զրահսն ի ներքս. և մխեաց ընդ սիրտ
նորա. և հանեալ զսուրն կտրեաց ըզ
գլուխ նորա. բայց ոչ կարաց ունել
զնա. զի թռեաւ գլուխն վախթան
կայ զբազում արամբք. և միոմն 'ի
ծառայիցն վախթանկայ էառ զգլուխն
և փախեաւ։ Եւ հասեալ սմբատայ՝
էհար մըրճովն 'ի վերայ գագաթան
ն̅ր̅ և գոգեալ զսաղաւարտն զգլխոյն
ոսկրն 'ի ներս մզեաց. մինչ զի հազիւ
կարաց հանել զմուրճն 'ի նմանէ. և
ն̅ր̅ հանեալ զգլուխն ընկէց յերկիր,
և ինքն մեռաւ։ և առեալ միւս այլ
ծառայի զգլուխն՝ փախչիլ սկսաւ։
Եւ սմբատ զհետ մտեալ ն̅ր̅՝ ասէ,
ո՛վ անմիտ պարսիկք, ահա՛ յայնչափն

էհաս վախթանկ զօրապետն ձեր, մինչ սրտացաւ ծառայքդ նորա՝ ըզ գլուխն առեալ փախչիք. արդ՝ գի տասջիք, զիև ձեզ պարտէ այդպէս լինիլ: Եւ դարձաւ ծառայն յետս և ձգեաց զգլուխն. և հարեալ ըզ կուրծն սմբատայ՝ ասէ, տա՛ր խորո վեա՛ և կեր. վայ՜ ձեզ որ այլ վաղ ո՛չ սպանիք: Եւ հասեալ սմբատ էառ զգլուխն. և զհետ մտեալ ծառային ասէ, այ՜ տիրատեաց պարսիկ, զգլուխ քո ընդէ՞ր ո՛չ ետուր փոխանակ տ՜ն քոյ. ա՛րդ՝ որովհետև տիրատեա՛ցէք, ե՛ս բառնամ՝ ի՛քէն զգլուխ քո. և հա րեալ անդէն զգլուխ նորա ընկէց յեր կիր. և դարձաւ մեծաւ յաղթութ՜ի՝ ի բլուրն: Եւ զօրքն շուրջանակի պատեալ զպարսկօքն՝ ի վա՛յր լցին զն՜ս. և ո՛չ մնաց՝ ի նոցանէ, բաց՝ ի չորս հա րիւրիցն որք զուղտսն արածէին, և փախստեա՛յքէին անտի. զորս ո՛չ հրա մայեաց սմբատ սպանանել. բայց էառ՝ ի նոցանէ՝ ռ՜խ ուղտս. և ութհարիւր

ձի և ջորի ։ Եւ իբրև վրճարեցաւ
պատերազմն՝ հրամայեաց 'ի ձորս և
'ի հեղեղատս ընկենուլ զգէշս սպա
նելոցն. և կոչեցաւ անուն բլրոյն
մահու բլուր ։
Եւ ինքն սմբատ առեալ զզօրսն՝
գնաց 'ի գիշերի 'ի վերայ քաղաքին պոր
պայ. և մտեալ զօրացն 'ի տունս նց.
զորս միանգամ գտանէին պարսից լեզ
ւաւ՝ սատակէին զնս. և զքիթսն կըտ
րեալ 'ի շարի արկանէին և բերէին
առ սմբատ. և համարեալ զքիթսն
գտին սպանեալ դ հազար պարսիկս
ընդ այր ընդ կին և ընդ մանկտի ։
Իսկ զորդին վախթանկայ և զկինն՝
առեալ տարան յայծից բերդն և եդին
անդ 'ի պահեստի ։ Եւ յղեաց սմբատ
պատգամս առ խոսրով պարսից ար
քայն և ասէ, տուր ինձ զհնգետասան
տարւոյ հարկն. զի կերին զօրքն քո
զմեր երկրիս զհացն և զխոտն, և այ
րեցին զփայտն անտառի. և զգին
ջրոյն՝ զոր արբին. և զգին տաճարին՝
ճ խէ զոր

զոր հայրն իմ վահան այրեաց վն զօ
րաց քոց. իսկ և զգին սապոնին վաթ
սուն հազար դահեկան. որով լըմա
ցաք զգարշահոտ հալաւսն և զարիւ
նաթաթախ հանդերձս քոյ զօրացդ
և զգեցաք։ Բ. պա թէ ոչ՝ գամ հարիւր
մարդով միայն 'ի պարսս 'ի վրդ քոյ. և
զամ պարսիկս գերեալ ածեմ 'ի տա
րօն. և շուն խառնեմ 'ի կուռսն քո,
որք փոխանակ նոցա հաջիցեն 'ի ձեզ։
Բ. րդ՝ փութով զոր ասացիդ՝ ուղար
կեա. իսկ թէ ոչ՝ տեսանես թէ զինչ
անցք անցանիցեն ընդ ձեզ յինէն։
Եւ խոսրով ոչինչ գրեաց նմա պա
տասխանի։

Բայց եղբայրն վախթանկայ սուրէն՝
առեալ ՃՌ դահեկան, և ԹՌ արս
ընտիրս՝ եկն 'ի տարօն գնել զկին և
զորդիս եղբօր իւրոյ վախթանկայ։
և սմբատ ընդ առաջ գնացեալ սու
րենայ ընկալաւ զնա սիրով և էած 'ի
մուշ։ Եւ իբրև կացին անդ աւուրս
Ժ խնդիր արր սուրէն որդւոյ եղբօր
Ճխը իւրոյ

իւրոյ վախթանկայ թէ ո՛ւր կայ 'ի
պահեստի. և նոքա ցուցեալ նմա ըզ
բերդն ասեն. անդ է եղբօր որդին
քո. և ասէ սուրէն և անդ այծարա՛ծ է
թէ դիւ՛արած. և ծիծաղեալ սըմ
բատայ ընդ ազի բանսն սուրէնայ՝
ետ ածել առաջի իւր զկինն և զոր
դին: Եւ իբրև եկին՝ ասէ սուրէն
ցսմբատ՝ իշխան հզօ՛ր աշխարհիս
հայոց՝ տո՛ւր զայս կին և զորդի իւր՝
տուրս պարսից արքային: ասէ սըմ
բատ՝ պարսից արքային և մեռեալ
շունմի անգամ ո՛չ տամ առանց գնոյ
որ զայն ճաշն ուտէ. թո՛ղ թէ զդոսա:
Բայց դու թէ գնել կամիս՝ տա՛մ
քեզ զսոսա. ապա թէ ո՛չ գնացէք
յարծրունիս երեքեանդ իմիասին և
ա՛յծս արածեցէք և բերդին ծառայ
ութի՞ արարէք: Իսկ սուրէն (քանզի
իմաստուն այրէր՝) ասէ, ո՛վ բարե
պաշտօն իշխան՝ եթէ զշունսն դար
պասիդ անգամ տայիր արածել՝ դեռ
պարծանքէր մեզ կալն այնպ՞ս 'ի քոյին

ճխթ

դրանդ

դրանդ. Թող թէ այծս արածել։
բայց թէ լսէք մեզ՝ առէք 'ի մէնջ հա
րիւր հազար դահեկան, և ԲԼ հազար
ուղտ, և Ե հազար պարսիկ ջորի և ձի.
և տուք տուրս զայս կին և զորդի
դորա. Բ. սէ իշխանն՝ զոր ինչ բերեր
այսր՝ իմ է. զի կտրեմ զգլուխդ և
զոր ինչ ունիս առնում յիս։ բայց թէ
պիտին դոքա քեզ՝ լեր գու քրիստո
նեայ և զիս 'ի պարսիկս տար, և սոքա
քեզ լիցին. և թէ ոչ՝ հնարս իմացէք։
Եւ սուրէն ետ բերել հարիւր հա
զար դահեկան, և զուղտսն և զջորիսն
և զձիսն և ետ ցիշխանն. և նա ասէ՝
հաւանեալ եմ տրոցգ. բայց հարիւր
ութսուն հազար դահեկանի փայտ
են տարեր 'ի քարքէոյ, և չորս հարիւր
հազար դահեկանի խոտեն կերեր 'ի
դաշտէն. և Ի հազար դահեկանի եղն
և եղջերու և նապաստակ որսացեր են
'ի յերկրէս. Թողում զգինսն ջրոյն և
հացին։ Բ. այց զասորւոց անուշ գինին
զոր յինէն կտրեալ ինքեանք արբին՝

թող տան մեզ զգինն ։ Նաև զգաւա
ռին հարկն զոր առեալեն, և զմուտսն
քաղաքին զոր կերեալեն ՟ի հարիւր
հազար դահեկան՝ թող տան մեզ
զայն, և դու քրիստոնեայ լեր և զիս
՚ի պարսիկս տար, և դոքա քեզ եղի
ցին ։ Եւ տրտմեալ սուրէնայ ոչ կա
րաց խօսիլ ինչ ։ Եւ ասէ իշխանն՝
ըստ քոյ կամացդ առնեմ զա՞մ ինչ.
բայց արի անցանեմք յայնկոյս գետոյն
և երթամք յուխտ ՚ի վանս իմ ։
Եւ առեալ զզօրսն անցին յայնկոյս
արածանու. ունելով ընդ ինքեանս
զկինն և զորդի նորա ։
Բայց զի նենգել կամէր սմբատ զօ
րացն պարսից՝ թողու զորդին իւր
զվահան յայնկոյս, զի որք ՚ի նա՛ անկ
ցին՝ սպանցէ՛ զնոսա ։ և ինքն թողեալ
զզօրս իւր ՚ի մեղտի չորս հազար այր.
և զպարսիցն՝ յանդաստանն, զոր ար
տից գեօղ կոչէին ։ Եւ առեալ հինգ
հարիւր այր ընտիր զիւրեաւ, և հինգ
հարիւր զնորայն՝ գնացին երկոքեանն

'ի վանսն • և իբրև եկին առ Թաքու
ցեալ խաչն՝ իջին յերիվարացն և գնա
ցին հետևակ 'ի վանքն • քանզի չէր
հնար ումեք երիվարաւ ընդ այն տե
ղին 'ի վեր անցանել • զի Թէ ԵԲն գրի
գոր և տրդատ ոչ իշխէին գալ անդր
երիվարաւ , ապա ո՞վ տյլ ոք ։
Եւ իբրև մերձեցան 'ի վայրս վանացն՝
ընդ առաջ եղեն նոցա պաշտօնեայք
ԵԲ ուխտին և արգելուին զսմբատ
վն սուրէնայ։ Եւ բարկացեալ սմբա
տայ ասէ, որովհետև այնպս պիղծ էք
պարսիկքդ՝ մինչ մայրեացս անգամ
չէք արժանի, կենաց արժանի ըլ՞էր էք։
Եւ յարձակեալ վարազայ որէր իշ
խան պալունեաց՝ կտրեաց զգլուխն
սուրէնայ • և զերկու իշխանսն պար
սից կախեալ զծառոյն խեղդեցին • և
չորս հարիւր այր ընդ սուր հանին։
Եւ քանզի զօրք իշխանին պալունեաց
Թաքուցեալ էին 'ի վր՞ բլրին՝ յարեան
'ի վր՞ յանկարծակի • և իշխանքն հե
ծեալ յերիվարս իւրեանց , այնպէս

ՃԾԲ յեր

յերկուց կողմանց 'ի մէջ առեալ ըզ
զօրսն կոտորեցին զնոսա անխնայ ։
Եւ որք կային յամրոցի արտից գեղջն
և դարանէին՝ յանկարծ 'ի դուրս վա
զեալ 'ի գիշերի՝ կտրեցին 'ի պարսից
երկու հազար հինգ հարիւր ձիս, և
հանին 'ի սրենց ձորն ։ Իսկ մնացեալ
զօրքն պարսից հետամուտ եղեալ
հասին յայն տեղին որ կոչիւր գողոց
աղբիւր ։ և յարձակեալ ձիագողացն
'ի վր̄ նոցա՝ հարին 'ի նոցանէ ե̄ճ̄ այր
պարսաքարիւ և ազեղամբ ։ և իջեալ
առին զերիվարս նոցա և խառնեցին
'ի միւսսն ։ որք եղեն երեք հազար ։
Իսկ ոմանք 'ի պարսից զօրացն հետա
մուտ եղեալ հետևակի գնացին յան
տառն ։ և անկեալ 'ի վր̄ ձիագողացն՝
սկսան կոտորել զնոսա ։ Իսկ որ ա
ճագն էր 'ի ձիագողսն սերեմ կոչեցեալ՝
սուր հանեալ դարձաւ ը̄ղէմ նոցա
'ի պատերազմ ինքն միայն, մինչև
դարձան ընկերքն ։ և իբրև եկին և
հասին՝ տեսին զի մեռեալ էր սերեմ ։

ճ ծ գ քան

քանզի հարեալ էին նետիւ զսիրտ
նորա. և թաղեցին զնա 'ի նոյն ձորն ։
և կոչեցաւ անուն անտառին սերեմա
ձոր՝ և ընկելք սորա քարիւ և փայ
տիւ ընդդէմ գնացեալ՝ զբազումս
սպանին. իսկ այլքն փախստական ե
ղեալ անտի եկին ժողովեցան 'ի մի
վայր, և իջեալ ճաշս ճաշէին անհոգա
պէս ։ Եւ ոմանք ելեալք յողկանայ
որսոյ պատճառաւ՝ արք ՃՄ յիսուն,
գտին զնոսա անդ նստեալ անհոգ 'ի
ճաշ. և յանկարծակի յարձակեալ 'ի
վերայ՝ ոչ ետուն ումեք 'ի ձի ելանել.
այլ 'ի շուրջ եկեալ 'ի նոյն սեղանն ըս
պանին արս հինգ հարիւր և ութ ։ և
վասն զի անդ ժողովեալ սպանին ըզ
նոսա՝ կոչեցաւ անուն տեղւոյն ժո
ղով՝ մինչև ցայսօր ։ Եւ իբրև այս
այսպէս գործեցաւ՝ ինքն սմբատ և
իշխանն պալունեաց թաքուցեալ 'ի
ձորն 'ի տեղւոջ ուրեք՝ առաքեցին
գոմն 'ի մեղտի՝ եթէ փութացէք գալ
'ի վերայ դոցա. և ինքեանք առաքեցին

արս հարիւր՝ գրգռել զզօրսն. որք
իբրև տեսին զզօրսն պարսից՝ գրեհ
տրճեալ միմեանց՝ հասանէին նոցա.
և իբրև եկին հարիւրքն առ սմբատ՝
ելին՝ի բլուրն, և զօրքն պարսից սկսան
բազմանալ՝ի վերայ սմբատայ և վա
րազայ. և նոցա ծուռնր կրկնեալ՝ յօգ
նութիւն կոչէին զՏՐ կարապետն,
ասելով՝ յիշեա զմեզ ՏՐ կարապետ
և զերախտիսն մեր. և որպէս օգնե
ցեր՝ի հեռաստանէ, օգնեա և՝ի մո
տոյս. և էհաս յանկարծակի՝ի թի
կունս նոցա օգնութիւնն ՅՍ։
Եւ փողոց տրճեալ՝ի վերայ բլերն,
սմբատյաջ թևն, և վարազ յահեակն.
և սկսան ինքեանք և երիվարք իւրեանց
յարեան թաթաւել. մինչ մածեալ
եղև սուրն սմբատայ ընդ ձեռն, և
ոչ կարաց հանել զնա և այլ սուր առ
նուլ զի մածեաւ արիւնն ընդ սուրն
և ընդ ձեռնատեղն, և սկսաւ կոտո
րել. և իբրև տեսին պարսիկքն զսմ
բատ յայնպի վտանգի, ձայն տրճեալ

միմեանց՝ ասեն, փութասջիք. զի մա
ծեաւ սուրն քաջին. և սուրն որ 'ի ձե
ռին նորա՝ կոտորեցաւ ահա։ և զայս
լուեալ պատեցին զնա յանկարծակի
և հարկանէին անխնայ իբրև զչոր
փայտ որ ճարճատէ 'ի ճեղքիլն. այն
պէս ճարճատեին զէնքն 'ի վր՞ գլխոյ
նորա։ Իսկ օմբատ ձայն էբարձ և
ասէ՝ վայ՛ ձեզ, և քաջութեդ ձերոյ,
զի ոչ կարացիք հերձուլ զգլուխ իմ
այնքան բազումքդ. ասաց զայս՝ զի
յիշեսցի առ յապայն։

Եւ իբրև գիտաց թէ կարի սաստ
կանայ պատերազմն 'ի վերայ, ձայն
եբարձ և ասէ, ո՛ւր ես բազուկ քաջ
և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց,
գաւազան ծերութեան իմոյ, իշխան
պալունեաց վարազ, յառաջ մատիր
իբրև զարծիւ քաջ. զի անգեղք և
բրէճք պատեցան զինև։ Եւ լուեալ
վարազայ եթող զահեակ թևն յոր
դին իւր վահան՝ որ զվահանովիտն
շինեաց. և կանչեաց 'ի վր՞ նոցա իբր

ճծզ զար

զարծիւ քաջ, մինչ զերիվարսն անգմ
իգողման էհար. և անդէն յօգնակա
նութիւն հասեալ նմա զօրութ՟ն ա՟յ՝
բախեաց զտէգն իվ՟ր թիկան պարսկի
միոյ և էհան ընդ ոզն երիվարի նորա.
և ո՛չ կարացեալ հանել զնա՝ կատակ՟ց
ասելով, երթ չափեա՛ զտէգն քո թէ
քանի կանգունէ հասակ նորա. զի մի
խաբիցեն զքեզ թէ երեք կանգունէ.
և անդէն անկեալ պարսիկն մեռաւ
վազվաղակի: Եւ սմբատ ելեալ յեզը
պատերազմին՝ հրամայ՟ց բերել պար
սիկմի և զենուլ իվերայ ձեռին իւրոյ
զի իջցէ 'ինմանէ՝ ջերմ արիւնն և թու
լացուսցէ զբրռնատեղն նորա. որ եղև
իսկ և թուլացաւ սուրն 'ի ձեռանէն:
Եւ փոխեալ նորա ա՛յլ սուր՝ հեծաւ
յայլ երիվար: և իբրև ետես թէ արք
վեց ռ՟ ի մէջ առին զհինգ հարիւրսն,
և գիտացեալ թէ եկաց երիվարն վա
բազայ պալունեաց իշխանին, էհար
զպարսիկմի և ձգեալ յերիվարէն՝ մա
տոյց նմա զերիվարն և ասէ, հեծիր իշ

ՃԾէ խան

խան պալունեաց. և նորա փոխեալ
զոտն անտի հեծաւ՚ի միւսն այն։ զոր
տեսեալ պարսից զօրացն կարի՛ զար
մացան, թէ զի ա՛րդ վաղվաղակի փոխե
ցին զերիվարսն։ և որչափ զօրքն բազ
մանային՝ նոքա յանհոգս կային՚ի մէջ
նոցա։ Եւ այնչափ բազմացան զօրքն՝
մինչ տեղի՛ անգամ ո՛չ գտանէին որք
յեզե՛րսնէին։ և ոմանք՚ի զօրացն սըմ
բատայ սկսան երկմտիլ։ Իսկ ըստ
տեսչութե՛ն ա՛յ՝ տեսին զմիւս սըմ
բատն որ էր իշխան հաշտենից, գայր՝
և ածէր ընդ իւր զվահանն կամսա
րական զորդին սմբատայ. և հազար
այր ընդ նմա։ Զոր տեսեալ իշխանն
վարազ՝ ասէ՛ ցնա՛, քա՛ջ որդի վահան
ո՛ւրէիր մինչև ցայժմ. որ չեկիր յօգ
նութիւն մեզ վաղապէս։ Եւ վահան
յարտասուս հարեալ ասէ, կա՛յ այն
տառապեալ հայրն իմ ծերունի, թէ
փոխեցաւ առ հանգիստն։ Եւ լըւեալ
սմբատայ՝ ձայն էբարձ և ասէ՝ որ
դեակ իմ վահան, ո՛բ կարապետն ինձ

միշտ'ի թիկունս կայր հասել, զիա՞րդ
ուրեմն մեռանէի ես'ի պարսից։
Եւ նորա գոհացեալ զա՜յ, և'ի դիմի
հարեալ իմիասին՝ անցին իներքս և
պարզեցին զթևսն, ընդ ինքեանս առ
նելով զմիւս իշխանն հաշտենից. և
սկսան կոտորել զպա՜րզմագլուխսն։
Եւ իվեր շրջեալ բոլորեցին և'ի մէջ
առին զզօրսն պարսից, և սկսան կո
տորել զնոսա անխնայ մինչև'ի մուտս
արևուն։ և մնաց 'ի պարսից չորս հա
րիւր այր. որք ընդ փախուստ դար
ձեալ երթային։ Եւ քանզի մնացեալ
էին երիվարք նոցա՝ երթեալ թաքեան
'ի ձորմի. և ննջեցին անդ խոցոտեալ
մինչև ցմիւս կէս օրն։ Եւ եկեալ
զօրաց իշխանին՝ ջուր ցանեցին յե
րեսս նոցա. և զարթուցեալ զնոսա
առեալ տարան 'ի մեղտի. և անՀանե
ցաՀ ձորն այն՝ թմբրաձոր։ Եւ հրա
մայեաց սմբատ զմեռեալ դիակունսն
կուտել իմիասին 'ի վերայ բլրոյն։ և
վասն կոտորածոյն վարազայ, վարա

զաբլուր կոչեցաւ տեղին։ և ինքեանք
եկին և իջին 'ի վանաց գեօղն, զոր կե
նաց վայրք կոչէին։ Եւ իբրև եմուտ
'ի նա՝ ընդառաջ եղեն նմա արք գեղջն
պարուք և երգօք։ որք 'ի հոտիլ դիա
կանցն՝ շէր հանեալ ասէին, կերին գա
ղանքն զմարմինս դիականցն և գիրա
ցան. կուզք կերեալ ուռան իբրև
զարջ. և աղվես հպարտ եղև իբրև
զառիւծ։ Գայլ՝ քանզի շատակերէր՝
պայթեաւ. և արջ՝ զի զոր ուտէն՝
չմնայ առ ինքն, մեռաւ 'ի սովու։
Ընգեղք՝ քանզի ագահքէին՝ նստան,
և այլ ոչ կարացին վերանալ։ մկունք՝
զի շատ տանէին 'ի ծակս իւրեանց՝
մաշեցան ոտք նոցա։ Օայս ամ ասա
ցին. որև 'ի դէպ եկն վասն իրացն.
ուստի անուն գեղջն կոչեցաւ շիրա
կանիք։ Իսկ զորս 'ի մեղտի ետ տա
նել՝ բժշկեալ 'ի խոցիցն և տրեալ
նոցա գանձս՝ արձակեաց խաղաղու
թբ՝ 'ի պարսիկս։ Եւ ինքեանք ելեալ
'ի տրունական տաճարն՝ բազում ըն

ծայս մատուցանէին ս̅ք կարապետին.
և դարձան ցնծութ̅ք 'ի տունս
իւրեանց ։
'Ի սոյն օր վախճանեցաւ ս̅քն ստե
փաննոս. և կայ ընդ այլ հարսն 'ի հո
ղաբլուրն ։ Եւ առեալ վահանայ զե
պիսկոպոսունս մամկոնէից և զպալու
նեաց և զհաշտենից՝ եկն 'ի վանսն. և
ձեռնադրեցին զեպիփան լինիլ հայր
վանացն. որ եկեալն էր 'ի դմնայ դաշ
տէն և բնակէր 'ի յանապատին ։
Սա՛ եկաց քսաներորդ զկնի ստեփան
նոսի ։ Սա՛ գնաց 'ի ժողովն զոր արար
հերակլ 'ի յինն ամի թագաւորութ̅ն
իւրոյ և նզովեաց զբազում եպիսկո
պոսունս. որև եպիսկոպոսն հաշ
տենից՝ 'ի պղծութ̅ի աղան
գոյն հալածական լի
նէր յերկիրն
յունաց ։
Եւ Ք̅ի մարդասիրին փառք յաւի
տեանս. Ամէն ։

Ճկա Յ.Ը. Գլուխ

Գլուխ երրորդ. Վասն գալստեանն
տիգրանայ. և կոտորածին որ
'ի հոնընկէցն։ 17

Արձեալ այլ զօրս գումարեալ
խոսրով՝ առաքեաց զմեծ զօրա
պետն իւր զտիգրան քսան հա
զարաւ 'ի վր՞ սմբատայ։ որոյ եկեալ
յապահունիս՝ կոչեաց առ ինքն ըզ
սմբատ Իսկ նա՛ առաքեաց առ նոսա
զորդին իւր զվահան տեսանել թէ
զինչ խնդրեն. որ իբրև գնաց և իմա
ցաւ զիրսն՝ արձակեց պատասխանի
առ հայրն իւր և ասէ, սա՛ մերթ բարի
խորհի մեզ և մերթ չար։ Բայց խընդ
րէ 'ի մէնջ զնշխարս մուշեղայ և զվա
հանայ հօր քոյ. և զկինն վախթանկայ
և զորդի նորա զոր սպանին 'ի պատե
րազմին վարազակայ։ Եւ թէ չտայք
ասէ՝ զտեղին ուր ձեր հաւա՛տնէ՝
բրեմ և աւերեմ. և զեկեղեցիս ձեր
կռատուն առնեմ. և տանիմ զձեզ
կապանօք 'ի դուռն արքունի։

Արդ՝ զայս ասաց, և ինքն ընդ հաշ
տէնս՚ի վեր կամի գալ։ Արդ՝ գնամ
ես զհետ նորա. և դու ժողովեա՛ ըզ
զօրս մեր և գնա՛ ՚ի ս̅բ կարապետն.
աղաչեա՛ զսուրբ կրօնաւ՛որսն աղօթս
առնել ՚ի վերայ մեր։ ո՛ղջլեր։
Եւ սմբատ ընթերցեալ զթուղթն
եկն՚ի ս̅բ կարապետն. և տարածեալ
զձեռս իւր առ ա̅ծ ընդդէմ ս̅բ սե
ղանոյն՝ սկսաւ լալ և ասել այսպէս։
Զարթիր տ̅ր և զարթո՛ զզօրութի̅
քո. լսեա՛ զայսոսիկ և տես տ̅ր. մի՛
լռեր և մի՛ դադարիր ա̅ծ բարեխօ
սութ̅ի կարապետին քոյ սրբոյ. զի
կարի՛ խրոխտաց թշնամին ՚ի վ̅ր մեր։
այլարդ՝ կամք տ̅նդ լիցին։ Բայց սա
կայն աղաչեմք զքեզ՝ յիշել զջանս
մեր որ ՚ի վերայ քոյ վ̅ս ուխտին սըր
բութեան մերոյ. զի փառաւ՛որեսցի
անուն քո յաւ՛իտեան։ Եւ զայս ասա
ցեալ՝ ետ բերել երկոտասան թուր
և դնել առաջի բեմին մինչև մատուս
ցեն զպատարա՛գն։ Եւ ՚ի կատարման

պատարագին՝ առեալ զնս՝ ասէ՝ այս
տ՞ր նեղացաք և ձանձրացաք և՛ի կո
տորելոյ անգամ զպարսիկսն. նեղե
ցան և որք զսուսերս մեր՛ի ժանկոյ
և յարենէ՛ սրբեցին։ Բ՛յլ հաւատամք
եթէ ո՞պ օգնեցե՛րդ՝ և օգնես։ և զայս
ասացեալ՝ել և գնաց անտի։

Եւ ապա՛ ժողովեաց զզօրս իւր ինն
հազար և թ՞ հարիւր քառասուն այր.
և երթեալ էջ՛ի հաշտեա՛նս՛ի գեօղն
որ կոչիւր կրեհ։ Իսկ տիգրանայ եր
թեալ էջ՛ի հոնընկէց, և առաքեաց
առ սմբատ զզօրս իւր և ասէ, արի՛
ե՛կ առիս և մի երկնչիր. ա՛ռ յինէն
գանձս և մեծութի՞ս. և եդից պսակ
՛ի գլուխ քո, և արարից մարզպան
հայոց. միայն լոկ զոսկերսն մուշեղայ
և զվահանայ տ՛ուր ցիս։ Իսկ նորա
կալեալ զպատգամաւորն հրացոյց
շամփուր մի երկաթի՝ և եդ զնա
պսակ շուրջ զգլխով նորա և ասէ.
կա՛ց տեսանեմ թէ վ՞ս քոյ զինչ պար
գև գայցէ ինձ, փոխանակ զի պսակ

եդի քեզ։ Եւ հրամայեաց ունել ըզ
զօրսն որք ընդ նմա եկեալ էին. և կրտ
րեաց զգլուխս նոցա մինչև 'ի վեց
ժամ աւուրն. և կոչեցաւ անուն
գեղջն մոգուց գերեզման. որէ մոգ
տունս։ Իսկ սմբատայ ելեալ 'ի վր
լերինն որ սերեմավայր կոչիւր՝ բա
նակեցան հանդէպ տիգրանայ։ և իբրև
երեկոյ եղև՝ վահան կամսարական
որդին սմբատայ՝ յարուցեալ կտրեաց
զգլուխ որդւոյն տիգրանայ, և զերից
իշխանացն. զի էին 'ի միում խորանի։
Եւ առեալ զգլուխսն գնաց առ հայր
իւր, և դարձեալ եկն 'ի տեղին. և եր
թեալ գաղտուկ եմուտ 'ի խորանն
առ տիգրան. և նորա տեսեալ զսուրն
մերկ 'ի ձեռին վահանայ՝ ոչ իշխեաց
ձայն տալ ումեք. կարծելով թէ կա
րասի կամի գողանալ։ Եւ վահանայ
յանկարծակի առեալ բարձմի աճա
պարեաց և ձգեաց 'ի վր բերանոյ նր։
և անկեալ ինքն 'ի վր բարձին նեղեաց
զնա, որ ոչ կարաց շարժիլ։ և մտեալ

ճկե ծա

ծառային՝ կտրեաց զգլուխ նորա։
Եւ ժողովեալ զկարասին և զպատճա
կան ակունսն և զընտիր սուսերսն,
գնաց անտի։ և խնդացեալ զօրացն
հայոց մեծ գոհութիւն մատուցանէին
ա̅յ. և ապաշաւեցին, զի զտապանս
իշխանացն աւերեալէին։
Իսկ վահան լցեալ իմաստութ̅ի՝
էառ երկու հարիւր կաշի ասպարի,
և էարկ զնոսա զհարիւր ջորեօք ամե
հեօք. և իւրաքանչիւրոցն երկուս
երկաթս. մի յայս կոյս և մի յայնկոյս
ասպարացն. և գնաց մերձ՝ի բանակ
հոնին որ էր փոխանակ տիգրանայ. և
ունէր ընդ ձեռամբ իւրով ութ հա
զար այր. և էր բանակեալ մերձ՝ի քա
րագլուխն, որ էր հանդէպ լերինն տօ
րոսի. և էր սա՛ զատակաց յայլոց բա
նակացն։ Որդ՝ առեալ վահանայ ըզ
հարիւր ամեհի ջորիսն տարաւ յեզը
բանակին. և՛ի տասն ջորիս այր մի կա
ցոյց երթալ զհետ նոցա. որք վարել
զջորիսն՝ի բանակն մտին և ինքեանք

զհետ և հընչեցուցին զփող մարտին.
և զորս գտին կոտորեցին. Եւ լըւեալ
զօրացն պարսից զձայն փողոցն՝ զար
հուրեցան, աղմկեցան, և կանչեցին
յոյժ. քանզի և ջորիքն ընդ ձայն սաս
տիկ փողոցն խրտուցեալ յամենայն
կողմանց լոկ արշաւէին:
Եւ զօրքն կարծելով թէ հեծեալք
իցեն՝ իւրաքանչիւր վայ՜ ճչէին, ոչ գի
տելով բնաւին զհետս անձանց իւ
րեանց. քանզի տ̄ր պատերազմէր ընդ
նոսա: Բրդ՝ քանզի յայլ զօրսն ոչ կա
րացին անցանել՝ զի մըթին գիշերէր.
և զքարագլուխն բնաւ ոչ իմացան.
զի յիմարեցոյց զնոսա. ապա՛ թողեալ
զերիվարսն՝ դէպ 'ի քարագլուխն փա
խուստ առնէին: և սկսան յահաւոր
բարձրութէ վիմացն 'ի վայր հոսիլ:
Բայց ոչ ոք գիտաց զիրսն. մինչև պա
կասեցաւ աղաղակ ճչոյն: Եւ 'ի պակա
սիլ ձայնին գիտացեալ զօրացն հայոց
թէ պակասեցան նոքա՝ դարձան վաղ
վաղակի 'ի բանակետղն և ժողովեցին
ճկէ

ըզ

զգանձս և զկարասիս նոցին, և զերի
վարսն և զուղտսն. և յղեցին 'ի գեօղն
պալունեաց։ և համար նց ընդ ուղտ
ընդ ձի և ընդ էշ՝ լինէր տասն և ութ
հազար. որք ծածկէին զերեսս
գաճառին։

Եւ իբրև առաճօտ եղև՝ խնդիր
արարին մնացել զօրքն պարսից՝ տիգ
րանայ և որդւոյ նորա և ոչ գտին.
մտեալ ապա առ փախստեայսն տեսին
զնս գահավիժեալ։ Եւ միաբանեալ
անդէն արարին իւրեանց զօրագլուխ
զմիհր խոսրով. և բարկութբ մեծաճ
ռազմ կարգեցին։ Իսկ սմբատ էր
թողեալ կողմնապահ զվահան չորս
հազար արամբք. և զերկու հազարսն
'ի դարանի՛էր կացուցեալ ընդ երիս
դիհս։ ուրև ինքն ռազմ կարգեալ
զայլ զօրսն՝ ետ զաջ թևն վարաղայ
իշխանին պալունեաց. զի այնչափ հը
զօրէր՝ որ մարդոյ քան զմինն աճելի
ոչ կրկնէր 'ի հարկանելն։ իսկ զահեկ
կողմն ետ 'ի ձեռն իշխանին հաշտե
ճկը նից.

նից. և ինքն թողու իւր թիկնապահ
զվահան զորդին վարազակայ ։
Եւ գումարեալ երկոքին կողմունքն՝
եկին հանդէպ իրերաց. միհրխոսրով,
և սմբատ. և եկեալ առ միմեանս ըս
կըսան հարկանել զգլուխ իրերաց ։
Եւ դիմեալ զօրացն պարսից՝ի վերայ
սմբատայ իբրև զմեղու, սկսաւ պա
կասիլ սմբատ. քանզի ծերացեալ էր ։
Եւ ձայն բարձեալ ասէր, ո՞ւրես որ
դեակ իմ վահան, հաս ինձ յօգնութի՛ ։
Եւ նի՛ ձայն արձակեալ առ ս՛բ կա
րապետն ասէր, ահա ժամ ով մկրտիչ
ք՛ի՝ կարապետ յօհաննէս. ո՞ւրեն
իմ ս՛բ կրօնաւորաց աղօթքն ։ և զայս
ասացեալ եմուտ յռազմն իբրև քաջ
առիւծ, և ցրուեաց զժողովեալսն՝ի
վր՛ սմբատայ հօր իւրոյ ։ Եւ սմբա
տայ ոգի՛ առեալ՝ վերացոյց զսուրն,
և հարեալ զգլուխ աւագի՛ նոցա թիկ
նախառն՝ի վայր ընկէց ։ Եւ դարձ՛ել
զօրացն՝ի վերայ նոցա փախստական
արարին զնոսա մինչև՝ի դարանսն. և

յարուցեալ դարանակալացն անդէն
'ի վր՝ 'ի մէջ առին զնոսա • և չորս հա
րիւր գլուխ համարով ընկեցին 'ի նո
ցանէ ընդ քարն 'ի վայր • որ կոչեցաւ
հոնընկէց • և ժամանեաց նոցա երե
կոյն • իսկ մնացեալ զօրքն պարսից
փախեան ընդ հաշտեանս արք ութ
հազար ։ և հանդէս արարեալ անդ
ծանեան թէ որչափ ինչ պակասե
ցեալէր յիւրեանց ։ վասնորոյ
կոչեցաւ անուն տեղւոյն
հանդիսեան ։

Իսկ սմբատայ իմացեալ թէ գնացին՝
յարուցեալ զհետ նոցա՝ էհաս 'ի վա
ղիւն • և իբրև բանակեցան առ իրե
րօք՝ խորհեցան զօրքն հայոց գնալ 'ի
վերայ պարսից • և կազմեցան առ երե
կոյին • և դեռ սոքա աստէին՝ եկին
հասին զօրքն ապահունեաց , արք
պարսիկք իբրև ՁԳ հազար • և խառ
նեցան ընդ իրարս ։ Զորս իբրև տե
սին զօրքն տարօնոյ՝ լքեալ յերկիր
կործանեին • և հնարս իմացեալ գնա

ցին ընդ մարկուց փողն՝ի վայր և անդ
բանակեցան ։ Իսկ պարսիկքն զՀետ
մտեալ՝ նեղէին զնոսա յոյժ և տային
՚ի գետն ։ Իսկ սմբատ զյոյս իւր զա
մենայն առ ա̅ծ եդեալ սկսաւ ասել
այսպէս ։ գիտեմ ա̅ր՝ զի մարդասիրու
թի̅ քո առ մեզէ՝ ՚ի վաղո՛ւց հետէ ։
հայեաց և արդ ՚ի մեզ, թէ որպէս նե
ղեն զմեզ թշնամիքն ։ և կնքեալ ինքն
և զօրքն իւր զանձինս իւրեանց նշա
նաւ խաչին՝ դիմեցին՚ի վերայ զօրա՛ցն
պարսից ։ Յայնժամ երևեցաւ նոցա
՚ի պատերազմին այրմի ահեղ և լու
սաւոր ։ և հեր նորա լո՛յս շողշողէր ։
զոր տեսեալ վահանայ՝ գիտաց թէ ս̅բ
կարապե՛տն է ։ Եւ խնդացեալ անդէն
յարձակեցաւ՚ի վ̅ր զօրա՛ցն պարսից ։
և կտրեալ ՚ի նոցանէ երեք հազար
այր՝ եդ առաջի, և տարեալ անցոյց
յաստեղօնս ։ և պատեալ իջոյց զնոսա
մինչև ՚ի հանդէպ եկեղեցւոյն ։ որք
կամէին անցանել ընդ նոյն տեղին և
սպանանել զկրօնաւորսն ։ Բայց զօ

ՃՀա

րութիւն տն զգետնեաց զնոսա, ո՛րք
ո՛չ կարացին անցանել ընդ ձորն. այլ
յետս անկեալ լինէին. ուստի տե
ղւոյն անուն յետսանկ կոչեցաւ։
Իսկ այլ զօրքն պարսից եկեալ հա
սին յանտառն որ հանդէպ վանացն
հայի, և թաքեան անդ։ Իսկ վահա
նայ աճապարեալ գնաց անդր. և սուր
'ի վերայ եդեալ կոտորեցին զնոսա.
յորոց մնաց և ո՛չ մի։ և կոչեցաւ ա
նուն տեղւոյն մահ՛ու առիթ։ և խիստ
վաստակեցաւ սմբատ յաւուր այն
միկ. բայց իշխանն վարազ'ի թիկ՛ունս
էհաս նմա. և զզօրսն եդեալ առաջի՝
գետավէժ առնէին զնս, մինչև եկին
'ի տեղին որ կոչի կուրայ։ և որք փա
խըստեայ երթային՝ կացին երիվարք
նոցա. և իշխանն պալունեաց զհետ
մտեալ բազում զօրօք կոտորեաց ըզ
նոսա։ Եւ իբրև եկին անդր՝ ասէ
վարազ ցպարսիկսն, զի սպառեցաք
զձեզ՝ փախիք որ կոտորեմք զձեզ.
և նոքա ասեն, կորեաք մեք և մեռաք.

որև կոչեցաւ տեղին այն՝ կորեայ ։
Եւ՛ի նոյն տեղին սկսաւ մի մի ունել
զնս և կտրել զթլփատսն. և ապրեալ
՚ի նոցանէ յաւուր յայնմիկ արք հա
զար քառասուն. որք գնացին ՚ի պար
սիկս առ խոսրով. և նա այլ զօրս
առաքեաց ՚ի տարօն ։
՚Ի նոյն ամի վախճանեցաւ սմբատ.
և ետ տանել զինքն ՚ի տապանատուն
հարց իւրոց՚ի գլակայ վանսն՚ի դուռն
սրբոյն ստեփաննոսի. այլ ոչ ՚ի յայտ ։
Յայսմ ամի փոխի սուրբ հայրն ե
պիփան առ ա̅ծ, յետ քսան ամի. և
նստաւ յաթոռ նորա դաւիթ գ̅ ամ ։
՚Ի սոյն աւուր կնքեցաւ տիրան որ
դին վահանայ ՚ի վանսն գլակայ ։
Եւ վահան ցնծութ̅ մեծաւ գոհա
նայր զա̅յ զենմամբ խոյոց և զըւարա
կաց ՚ի ս̅բ կարապետն. և խնդացոյց
յոյժ զաղքատս երկրին զըւարթա
գին և առատ ողորմութեամբ ։
Եւ դարձաւ փառօք ՚ի հայրենին
իւր ։

Եւ Քնի ա̅յ մերոյ փառք, յաւի
տեանս. Ամէն:

✠

Գլուխ Չորրորդ. վասն գալստեան
վարդուհրայ և մեռանելոյն 'ի տեղին
որ կոչի փանդիկ: 18

Եղև յետ տասնևութ ամի դար
ձեալ գժտութիւն ընդ պար
սիկս և ը̅ վահան. և առաքեաց խոս
րով զօրս 'ի տարօն որէր յիսուն հա
զար. որոց գլուխ կարգեաց զվար
դուհրի զզօրապետն իւր: և բազում
սրտմտութ̅ եկեալ հասանէին 'ի տա
րօն. և խնդրէին անցանել 'ի վանսն
գլակայ և հանել զոսկերս իշխանացն.
և եկեալ իջին 'ի մուշ: Իսկ վահան
կոչեաց զորդին իւր զտիրան և ասէ,
որդեակ, մի՛ վասն զի 'ի մեծութ̅ ես՝
պատրել տայցես զքեզ մեղաց. և մի՛
վասն զի մանուկ ես՝ խաբիցիս 'ի դեղոյ
կանանց. այլ յիշեա՛ զհարսն մեր թէ
որչափ սրբութ̅ ծառայեցին ա̅յ. և

մի՛ մոռանար զծառայութի՞ ս՞բ կա
րապետին և զայլոց սրբոցն. զի՛ի պա
տերազմունս նա՛էր որ օգնէր մեզ, և
այլ ս՞բք։ Այլ եթէ շատակեաց կա
միս լինիլ՝ ՚ի պղծութի՞ մի՛ պատրիր.
որպէս և չես իսկ։ Եւ՛ եթէ ես մե
ռանիմ ՚ի պատերազմին՝ զիս ՚ի մե՛ր
վանս տուր տանել։ և դու ծառայեա՛
ա՞յ և կրօնաւ՛որաց նորա սրբութ՞ք.
ո՞պ և ես ծառայեցի։ Օի ո՛չ պատ
րեցայ ՚ի գեղոյ, և ո՛չ զրկեցի կամ
նեղացուցի զոք ՚ի տառապելոցն.
քանզի զամենեսեան որք ընդ իմով
ձեռամբ էին, զարս և զկանայս և ըզ
մանկտիս, և զա՞մ հաւատացեալս ՚ի
ք՞ս, իբրև զեղբարս և զընտանիս տան
իմոյ հոգայի խնամով. ո՞պ և հարքնիմ
առնէին։ Որդեակ, զնոյն և դու ա
րասցես. և ա՞ր զօրացուսցէ զքեզ.
արդ՝ գնամք՚ի պատերազմ։ Եւ՛ կոչ՞ել
զգրիգոր հայրն գլակայ վանից՝ տա
րան զնա ՚ի պատերազմ. և ընդ նմա
գ՞ ճ՞ ձ՞ե կրօնաւ՛որս կնկղով։

ճ հե Եւ

Եւ իբրև խմբեցաւ պատերազմն յե
զերս արածանու՝ յայն լեառն որ կոչի
կաղամանեաց բլուր, սևազգեստեալ
կրօնաւորքն մազեղինօք • և 'ի տասն
կրօնաւորսն ժամահարմի եդեալ ու
նելով խաչմի նշանակաւ 'ի յուսն ։
Եւ ճակատեցան նոքա ընդ միմեանս
'ի պատերազմն յայնկոյս գետոյն որ
'ի դաշտին • զոր տեսեալ թշնամիքն
զարմանային յոյժ • Իսկ վարդուհրի
ոչ եմուտ 'ի պատերազմն • այլ տեսից
ասէ թէ զինչ գործեն ։ Եւ իբրև
խմբեցաւ պատերազմն ընդ իրարս
սկսան պակասիլ վահանեանքն և կա
մէին փախչիլ։ յայնժամ ծունր կըրկ
նեալ կրօնաւորացն միաբան աղազա
կեցին առ ա̅ծ աղօթիւք և լի արտաս
ւօք, և ասեն ցս̅բ կարապետն, ո՛վ կա
րապետ՝ զարթիր 'ի ձայն պաշտօնէից
քոց • և զայս ասացեալ միաբան և
յո՛տն կացեալ դարձուցանէին զնշան
սուրբ խաչին 'ի վերայ թշնամեացն •
և առեալ զժամահարսն հարին յան

դուգն հարմամբ ։ Յայնժամ հայե
ցեալ վահանայ 'ի գունդ կրօնաւո
րացն ետես յաջ թևս նոցա երիտա
սարդմի ահագին տեսլեամբ. և թագ
ծիրանի 'ի գլուխ նորա և խաչ. և 'ի
հանդերձից նորա հուր փայլեալ ։
Եւ տեսանէր այլ ևս երկուս արս
թևաւորս երիտասարդական հասա
կաւ, որք երթային առաջի ։ զոր տե
սեալ թշնամեացն յիմարեցան և 'ի
գետ անդր լցան. և որք յայնկոյս ան
ցին գետոյն՝ ուշ արարին մեղտայ ։
Իսկ վահան ձայն տըւեալ առորդին
իւր տիրան և յայլ զօրսն՝ ասէ, ահա
տրն աբրածոց՝ երևի 'ի մէջ ծառայից
իւրոց. զի նաէ թագաւոր նոցա և
մեր ամենեցուն. որ խոնարհեցաւ 'ի
ձայն պաշտօնէից իւրոց և էջ փրկել
զնոսա և զմեզ ։ արդ՝ պնդեսցուք ու
րեմն զկնի թշնամեացն. Իսկ անօրի
նացն հասեալ 'ի մեղտի՝ գտին անդ եր
կոտասան ծերս 'ի կրօնաւորացն, և
սպանին զնոսա. և թաղեալ կան 'ի

դուռն եկեղեցւոյն. զի այն իսկ էր
խնդրմածք նոցա։ Իսկ վահան մը
տեալ 'ի գետն՝ էանց յայնկոյս 'ի գեօղն
զոր պարսից կողմ կոչեն. և անդ ժո
ղովեցան և այլ զօրքն վահանայ. և կրօ
նաւորքն 'ի նոյն տեղւոջն աղօթէին։
Եւ վահան երթեալ վարեաց զզօրսն
պարսից մինչև 'ի դաշտն որ 'ի վերայ
մատրավանից. և բոլորել անդ ռազմ
կանգնեցին։ Եւ եկեալ առ միմեանս
վարդուհրի և տիրան որդին վահա
նայ։ և ասէ վարդուհրի՝ կախարդա
սարք, դուք 'ի կախարդսն էք պանծա
ցեալ. և կամիք յաղթել կախարդու
թեաց պարսից քաջացն։ Ասէ տիրան,
եթէ կախարդ եմ դու վայր մի անսա
ինձ և ես զքո ձիոյ ագին քեզ տե
սանել տամ. և աճապարեալ իբաց
ձգեաց զաջոյ ոտն նր սռնապանօքն
հանդերձ. և նր հակեալ յայնկոյս՝
անկաւ յերկիր. և տիրան ասէ, վար
դուհրի, մի մեղադրեր զիս, զի գը
լուխդ հակեաց և ընկէց զքեզ արդ
ՃՀը ուղ

ուղղեմ զբեռնդ և ապա՛ տամ բառ
նալ. և կտրեալ անդէն զգլուխ նորա
ետ ցծառայմի և ասէ, ա՛ռ պահեա՛
զդա, որ ի՝ջանեմք 'ի մատրավանս և
գնտի խաղամք առաջի ս̅ր̅ կարապե
տին. զի գա՛էր որ նախատէր ըզ
պաշտօնեայս նորա։

Եւ պատեալ զզօրսն պարսից՝ ըսկը
սան ցրէել զնոսա 'ի միմեանց. զի իշ
խանն պալունեաց կտրեաց երկուս
իշխանս և էհան զնոսա մինչև 'ի հաշ
տեանս։ Եւ իբրև էհաս իշխանն
փախստական 'ի տեղիմի դաշտին և
պակեաւ մինչ դեռ զօրքն հեռի՛էին,
և ո՛չ կարաց խօսիլ կամ կռվիլ։
Իսկ միոմն 'ի ծառայիցն ասէ, զի՞ պա
կեար ո՛վ իշխան. իսկ նա ասէ, զպա
ղակ իշխանն տեսանեմ և ո՛չ կարեմ
գնալ. բայց ո՛չ կարացին գիտել թէ
զինչէր բանն. և անկեալ անդէն մե
ռաւ։ Իսկ նորա առեալ երկուս
իշխանորդիս՝ ետ 'ի պահել. և ինքն
գնաց զհետ փախստէիցն։ Եւ հա

սեալ

սեալ միւս իշխանին ասէ ցնա՛, անկիր
պա՛րսիկ կամաւ. ապա՛ թէ ոչ անկա
նիս ակամայ. իսկ նա փախեաւ. և
վարազ զհետ մտեալ էհար զտէգն՝ի
թիկունս նորա և անցոյց ընդ ողն ե-
րիվարին, և ասէ, ա՛յժմ անկանիս. և
սակաւիկ մի այլ գնացեալ էհաս և
միւս իշխանին և ասէ՝ անկանի՞ս կա
մաւ. իսկ թէ ոչ՝ անկանիս ակամայ:
Իսկ նորա դարձեալ յետս՝ էհար ըզ
գլուխ երիվարին վարազայ և ընկէց
յերկիր. և նա 'ի վայր վազեալ էհար
զջիլս երիվարին պարսկին. և ասէր
անկիր և դու. և անւանեցաւ անուն
տեղւոյն՝ անկանիս: Եւ առեալ զեր
կու իշխանորդիսն և զգլուխ ա՛յնր իշ
խանացն որ պակեաւն, և կոչեցին
զանուն տեղւոյն պուղկ: Եւ դար
ձաւ վարազ առ սմբատ որդին իւր.
և իջին առ վահան. և նա՛ էր կոտո
րեալ զբազումս և աշխատ՝ելէր յոյժ
իսկ փախուցեալքն յերեսս դաշտին՝
երթեալ թաքուցեալ լինէին. և կո

չեցաւ անուն տեղւոյն փանդիկ ։
Իսկ կրօնաւորքն գային 'ի կաղամա
խեաց լեռնէն և եկեալ եղանէին 'ի
բլուր մի որ հայի ընդ դաշտն մատ
րավանից. և դիմեցին առն̃ գունդ մի
պարսիկ փախստական . և աղաչէին
զկրօնաւորսն ապրել ։ Իսկ իբրև այլ
գունդք եկին յիշխանէն հաշտենից՝
ասեն , ո՞ւր են պարսիկքն որք գային
զհետ փախստէիցն . և ոչ ետուն կր
օնաւորքն զպարսիկսն 'ի ձեռս նց ։
Եւ եկեալ իշխանն հաշտենից ասէ ,
ո՞ւր են պարսիկքն . և նոքա ասեն ,
աւասիկ կան առ հայերոյդ . և կոչե
ցաւ անուն տեղւոյն հայկերտ . և
ապա դադարեցաւ պատերազմն . և
դարձուցին զփախստեայսն 'ի մեղտի.
և համարեալ զնոսա՝ գտին արս չորս
հարիւր եօթանասուն ։ Եւ տրւեալ
նոցա գանձս և երիվարս՝ արձակե
ցին 'ի պարսիկս զրուցատարս լինել
սքանչելեացն որ հանդիպեցաւ
'ի կրօնաւորացն նոցա ։

 Եւ

✠

Եւ Քս̃ի յուսոյն մերոյ՝ փառք
և երկրպագութիւն ընդ Հօր
և ընդ սրբոյ Հոգւոյն.
այժմ և անզրաւ
յաւիտենիւ։
Ամէն։

✠

Գ.Ա.Ր.Ջ.

✠

Ճշբ Յանկ

✠

Վասն մահճան տիրանայ որդւոյ քա
ջին վահանայ. և վասն պատերազմին
զոր արար յեզր աղի ծովուն:

Յետ այսր ամենայնի զրուցատա
րութեա՛ 'ի պարս՝ սուգ անասե
լի եղև ժամանեալ ազգիս հայոց.
զի քաջն վահան եղև առ տ̄ր փոխե
ցեալ. և կայ թաղեալ 'ի դուռն տա
ճարի ս̄բ կարապետին: կացեալ իշ
խան ամս երեսուն՝ ապահունեաց և
տարօնի. յաղթեալ ա̄մի տ̄ն կարողու
թ̄բ: Բայց արդ տիրան որդին վահա
նայ՝ հրամանաւ հօրն իւրոյ և վաշ
դեան կոչեցեալ վրաց իշխանին՝ գնաց
առ խոսրով նախ քան զգնալն հերակ
լի 'ի պարս, և եղեալ նմա որդեգիր
և մարզպան հայոց՝ առնու 'ի նմանէ
զօրս բազումս և գայ 'ի վ̄ր յունաց
որպէս թէ 'ի մարտ պատերազմի:
Բայց յղէ պատգամս առ հերակլ 'ի

ծածուկ և ասէ, երկիւղ բնաւ իսկ
'ի սրտի քում 'ի գալստենէ իմմէ մի
լիցի. այլ տացես ինձ քաղաք մի բնա
կիլ զօրացս և ժողովեալ իմ զամ 'ի
թիկունս եկից քեզ։ Եւ ասէ հե
րակլ դաշն ուխտի հաստատեցից 'ի
մտի՝ թէ ոչ միայն հայոց և պարսից
մարզպան կացուցից զքեզ, այլ բոլոր
'ի վր յունաց դիմէսլիկոս եղիցիս։
Զոր իմացեալ վաշդեան իշխանն վը
րաց՝ ազդ արար խոսրովու և ասէ՝
նենգեաց քեզ տիրան և միաբանե
ցաւ ընդ յունաց. արդ՝ առաքեա՛ արս
ութհազար ընդ կողմանցն վանանդոյ,
և ես դիւրաւ տացից զնա'ի ձեռս քո։
Եւ կոչեալ արքայն զջոջիկ որդի վը
րաց իշխանին եդ մարզպան 'ի վերայ
զօրացն։ և զիշխանն սիւնեաց անար
գեաց և ետ ձեռակոծ առնել իբր
զնենգօղ։ Եւ ինքն առաքեաց առ
վաշդեան արս հինգ հազար։
Եւ գրեաց վաշդեան առ տիրան և
ասէ, գիտեմ զի ձանձրացար 'ի պան

դըխտութեդ, ել եկ առիս զի խորհի
ցուք խորհուրդ ինչ վասն արքային։
Եւ իբրև ընթերցաւ տիրան ըզ
թուղթն վաշդենի՝ խսկոյն պատրաս
տեցաւ գնալ առնա. զի ոչ գիտէր ըզ
նենգութի նորա։ Բայլ 'ի նոյն աւուր
եկն գիր մի 'ի ծածուկ 'ի համամայ
քեռորդւոյ վաշդենի՝ և ծանոյց ըզ
նենգութի վաշդենի, և զգալ զօրացն
պարսից։ Յայնժամ գրէ տիրան առ
վաշդեան և յամօթ առնէ զնա յայտ
նապէս յանդիմանելով զնենգագոր
ծութի նորա։ Եւ վաշդեան զայրա
ցեալ ընդ լուրն՝ կոչեալ եբեր առա
ջի իւր զհամամ, և ետ ծայրատել ըզ
մատունս ոտից նորա և զձեռացն։
Եւ ապա առեալ զզօրսն անցանէ ըն
գետն Ճօրօխ, և գնայ 'ի քաղաքն հա
մամայ որ կոչիւր տամբուր։ Էհար
զնա հրով և սրով. և գերեաց զեպիս
կոպոս քաղաքին որ կոչիւր մանգնոս.
որև անիծեաց զնա յոյժ, որ զայն
չարիս արար ընդ նոսա։ Եւ մահա

բերն վաշդեան հրաման եւ զօրացն
ժողովել զքահանայսն եւ կոտորել
զամենեսին յեկեղեցին որ սիօնի ։
Եւ աղօթեալ որ եպիսկոպոսն մանգ
նոս առաջ՝ եւ ասաց՝ թէ խոպան լիցի
քաղաքս այս եւ յաՀիտեան մի շինես
ցի՝ եւ ոչ ոք բնակիցէ 'ի սա ։ եւ զայս
ասացեալ անկաՀ 'ի վր որ սեղանոյն.
եւ զենին զնա անօրէնքն յաՀուր պեն
տէկոստէի նախ քան զպատարագն ։
Եւ 'ի միւսում աՀուր եղև յոյժ
սաստիկ ճայթումն ամպոց . եւ վաշ
դեան հրակէզ եղեալ 'ի դրան քաղա
քի՝ բարձաՀ 'ի միջոյ եւ սատակեցան
յայնմ գիշերի 'ի զօրացն վաշդենի արք
երեք հազար ։ եւ մնացեալքն փախչ
տական եղեալ մնաց քաղաքն անբնակ
եւ աՀեռակ ։ որ յառաջն տամբուր կո
չիւր . եւ յետոյ շինեալ 'ի հոմամայ
համամաշէն անՀանեցաՀ ։
Եւ այսպէս փուրթանակի հասեալ ա
ղօթք որ ծերոյն՝ հանգեաՀ ինքն առ
Քս, եւ պսակեցաՀ անանց պսակաՀն ։

Եւ ելեալ հերակլ 'ի սոյն ամի՝ ըս
պան զխոսրով. և յիշեալ զերդումն
իւր ըն տիրանայ՝ կացոյց զնա մարզ
պան ամենայն հայոց։ և ինքն գնաց 'ի
գահն իւր կոստանդնուպօլիս։
Եւ յետ ութ ամաց անցելոյ՝ քեռոր
դին մահմէտ ապտրահիմ անուն եկն
յերկիրս մեր տասն և ութ ռ զօրօք
և բազում աղխիւք, և խնդրէր հարկս
'ի յՆհէս հայոց։ Իսկ իշխանն տիրան
արին և քաջն և վրէժխնդիրն եկեղե
ցւոյն քի՝ առաքեաց և կոչեաց առ
ինքն զզօրսն իւր զի 'ի մարտ պատրաս
տիցի. յայնժամ պիղծն ջոջիկ որդին
անիծեալ և սերմն ժանտ չարին վաշ
դենի՝ ժամ դիպօղ գտեալ զիւրն չա
րութի 'ի կիր արկելոյ՝ ապստամբե
ցոյց զհայկական զօրսն չերթալ 'ի կո
չումն տիրանայ։ Եւ տեսեալ տիրա
նայ թէ 'ի վախճան դիմէ գործ իրին,
ժողովեալ զութ հազարսն միայն որք
ընդ իւրնէին՝ էլաց մեծաւ հառաչ
մամբ և ասէ ցնոսա, ով ժողովուրդք

ք̅ի և արի զօրականք ն̅ր̅, ինձ լաւէ
այսօր մեռանիլ վ̅ս̅ ք̅ի. քան տեսանել
զեկեղեցին հարկս տալ անօրինաց։
Եւ ելեալ նոքօք 'ի վաղիւ բանակե
ցաւ 'ի դաշտին որ կայ առ ստորոտով
գռգուռի ընդ կողմն հարաւոյ։
Եւ խմբեցան ընդ զօրացն այլազ
գեաց ճակատ ընդ ճակատ յառաւօ
տէ աւուրն մինչև յերեք ժամ. և
մինչ 'ի փախուստ կամէին դիմել այլ
ազգիքն՝ իսկ անդէն ապստամբեալ
չարասիրտ և գիշակեր իշխանն անձե
ւացեաց սահուռ անուն, և յաւելեալ
'ի միւս կողմն սկսաւ իւրովք զօրօք
կոտորել անխնայ զզօրսն հայոց։
Յայնժամ տեսեալ քաջասիրտ և բա
րեյոյս իշխանն տիրան՝ ճեղքեաց
իբրև զառիւծ զերկոսին կողմունսն.
և հասեալ առ սահուռ ասէ ցնա մե
ծաւ ձայնիւ, կաց ո՛վ ուրացօղդ ք̅ի՝
ըմբռնեաց զքեզ տ̅ր իմով բազկաւ։
և վերացուցեալ զսուրն էհատ ըզ
գլուխ պղծոյն։ և ինքն անդէն պսակի

մարտիրոսական մահէամբ 'ի նոյն պա
տերազմին ԹՌ հարազատ իշխանօքն ։
Ոմանք ապա 'ի մերոց զօրաց 'ի փա
խուստ դարձեալ հանդէպ մօրոյն
օձ քաղաքի ։ և ոմանք անդէն նահա
տակեցան ։ զոր բարձին և բերեալ
եդին ծածկապէս 'ի պահեստի 'ի ՍԲ
տեղւոջ որ կոչիւր բանակ ։ Եւ այս
պէս եղեալ զրաւ մարտին և տիրեաց
սուգ ազգիս հայոց ։ Իսկ ապտրս հիմն
անցանէ ընդ հարք և ընդ բասէն յեր
կիրն վրաց, և 'ի ջաքազս վանանդոյ ։
և առնու հարկս 'ի նոցանէ Իսկև 'ի
սոյն ամի եղև քակեցել եկեղեցին աշ
տից ։ որ հիմնարկեալ էր 'ի գրիգորէ
լուսաւորչէն մերմէ ։ այլև վանքն ինն
ակնեն և մանրավանից շինեածն ։ այլև
հրաշալի կաթողիկէն ասղաբերդի, և
տաճարն ներսէսի որ 'ի թիլնաւանի էր
յեկեղեաց գաւառին ։ Իսկ երանելի
մարզպանն մեր կայ եդեալ 'ի շիրմի 'ի
դուռն մեծի տաճարին որ 'ի ձիւն
կերտ 'ի տարօն 'ի պորպ քաղաքի ։

Է 'Ի

Ի փառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սբ̄յ։ Երրեակ անձանցն և միոյ բնու
թեան։ Որում պատիւ և փառք ան
զրաւ յաւիտենիւ. ամէն։

✠

Ասն գիտելոյ զպատճառ խաչին ծի
ծառնէոյ թէ ուստի կամ ոյր ձեռօք
բերաւ 'ի հայս. կամ ո̄պ և յորում
ժամանակի կայր 'ի ծիծառնէ։ 2

✠

Ընդ ժամանակս թագաւորութ̄ե
կայսերն հերակլեայ մեծի, յոյժ
զօրացեալ խոսրովու պարսից
արքային, գնաց մինչև յերուսաղէմ.
և քակ̄ել զքաղաքն այրեաց բազում
գրեանս։ Եւ գերեալ զսուրբ խաչն
փրկչական՝ տարեալ 'ի պարս եդ 'ի
պահեստի 'ի տան իւրում հանդերձ
սպասիւք սրբութ̄ե նորին. և մնաց
անդ մինչ 'ի Ժ̄ և Է̄ ամն իշխանութ̄ե
կենաց նորին։ Յորում ժամանակի
զօրացեալ արքայն հերակլ՝ գնաց մե

ծաւ բազմութեան 'ի պարս և եսպան
զխոսրով. և հանեալ անտի զփրկտ
գործ նշանն ա̅ծային բերէր ընդ ին
քեան հանդերձ այլովք գերեօքն ։
Եւ զանց առնելով զբազում օթևա
նօք՝ ճեպէր հասանիլ 'ի տեղի իւր։ և
այնպէս փութաճեպ խաղացմամբ, և
մասունս բազումս տալով իշխանացն
հայոց՝ եկն էհաս յերեզնաւան։
Յորում տեղւոջ ոմն 'ի սպասաւորաց
դրան իւրոյ կտրեալ գաղտապէս ըզ
մեծ մասն կենաց նշանին՝ կամէր դի
մել 'ի փախուստ. զոր ծանեալ ոմն
ծանոյց արքային վաղվաղակի. և իմա
ցեալ արքային կալաւ զգողն էառ ըզ
գողունին, և սաստիկ չարչարեալ գըլ
խատեաց զպատժաւորն։ Եւ ելեալ
անտի գայ հասանէ 'ի կեսարիա, և
տայ զմասն փրկութեան կենաց պատ
ճառին 'ի ձեռն հայրապետին յօհան
նու որ կայր 'ի տեղւոջն. և ինքն չըւել
անտի ժամանէ 'ի բիւզանդիա, և ան
ցեալ յօգոստաբնակ գահն արքայա

կան նստի խաղաղութիւն ։

Եւ ՚ինոյն ամի գնաց կամսարականն վահան՚ի կեսարիա վասն իրաց ինչ. և տրճեալ երեսուն և վեց դահեկան յօհաննու հայրապետին աղերս հայցման՝ և առեալ զսուրբ խաչն եբեր՚ի վանս իննակնեան. և եդ յամրագոյն տեղւոջ ՚ի վերայ սեղանոյն որ էր շինեալ հաստատապէս ։

Եւ եկաց անդ ամս վեց ։ ընդ այն ժամանակս իշխանն արջուց գորդ անուն, որ մակ անճամբ շատախօս կոչիւր, որև զգաճառն յանուն նորա շատախ կոչէին. եկն ՚ի գաճառն տարօնոյ առ իշխանն ծիծառնիկ, որ ունէր աճանմի փոքրիկ ծիծառնիկ կոչեցեալ. և աղաչէր զնա իշխանն գորգ և ասէր տաց քեզ վեց հազար դեկան՝ եթէ արասցես հնարս և գողասցես զսուրբ խաչն. զի սպասաճոր ՆԲ տեղւոյն այնորիկ ազգականէ քեզ՝ և դիւրաճ լինի գործդ ։ Եւ ծիծառն իբրև լըճաճ զբանն՝ ասէ ցգորգ ու

րա

բախական դիմօք քո դրամն զոր պար
գևել կամիս՝ քեզ լեցի. բայց զխաչն
զոր խնդրես՝ առից և եկից յերկիրն
քո. և անդ ուրև կամիցիմ շինեցից
աւան, և կոչեալ զնա յիմ անուն՝ կա
ցից անդ առ քեզ մինչև 'ի մահ ։
Եւ հաւանեալ գորգայ՝ առնու ծի
ծառն զկինն և զորդիս և զազգա
տոհմն իւր՝ և յղէ առ գորգ իշխանն
արջուց. և ինքն գնացեալ առ վերոյ
գրեցեալ լուսարարն և ծանոյց զիրն.
որոյ հաւանեալ՝ իջոյց զսուրբ խաչն
թագնաբար, և երկոքեանն իմիասին
առեալ զնա փութացան և հասին առ
գորգ՝ և շինեալ անդ եկեղեցի՝ եդ
'ի նմա զնշանն տրունական ։
Ընդ ժամանակս ընդ այնոսիկ հայրա
պետն տայոց գաւառի ներսէս անուն,
որ շինեաց զհրաշազարդ եկեղեցին 'ի
վաղարշկերտ, կամեցաւ գալ 'ի տեսու
թի կենսատու տբ նշանին. և առեալ
ընդ իւր զիշխանն վահան. եկին 'ի
վանսն գլակայ ։ Եւ իբրև ելին սպա
ժ:ա սա

սաւորք տաճարին բերել զ՝ս՝բ խաչն՝
ոչ գտին զնա 'ի տեղին ։ և յետ բա
զում անգամ որոնելոյ և ոչ գտանելոյ՝
սուգ մեծ առին ամենեքեան առ հա
սարակ։ և վահան յեօթն օր անսըւաղ
եկաց լալով ։ Եւ ընդ այն աւուրս
մինչ ննջէր վահան տրտմութեամբ 'ի
դրան տաճարին՝ յաւուր ուրբաթու՝
ետես 'ի տեսլեան երազոյ զայրմի ա
հեղակերպ ը՝ սեամս միւսոյ դրանն,
որ ասէր նմա մեղմաբար և հանդարտ
ձայնիւ՝ գողացել զիս տարան 'ի յարջք
և շինեալ եկեղեցի՝ եդին անդ մոլե
կանքն այնոքիկ ։ Բայց թոյլ տուր կալ
'ի տեղւոջն՝ վասն ամրութե՝ վայրին.
զի մի միւս անգամ գողասցին ։
Եւ զարթուցեալ 'ի քնոյ բարեպաշ
տօն իշխանն վահան՝ և փութացեալ
խնդութ՝ առ հայրապետն աւետեաց
նմա թէ ս՝բ նշանն 'ի յարջքնէ. և լւ՝ել
զայս խնդացին ամենեքեան և ուրախ
եղեն ։ Եւ 'ի վաղիւն տօն ցնծութե՝
կատարեալ՝ գնացին անտի 'ի տեղին

ուրէր ս̅բ̅ խաչն։ Եւ կալեալ զգող
կրօնաւորն բերին առ հայրապետն
թէ զինչ հրամայէ առնել. և նա հրա
մայեց հանել զբ̅ աչսն։ Իսկ զծիծառն
կալաւ իշխանն վահան և էհատ զգը
լուխ նորին։ և զիշխանն արջուց կա
լեալ եդ յողկան և էառ 'ի նմանէ հա
րիւր հազար դեկան։ Եւ ապա շի
նեալ տաճար 'ի վերայ բլրոյն մշոյ՝ յա
նուն կրտսեր որդւոյ իւր ստեփան
նոսի. որ արդ թաղեալ կայ 'ի նմա։
Եւ առեալ վահանայ զս̅բ̅ խաչն՝ ետ
'ի յառաջնորդն արջուց. և նա կացոյց
եօթանասուն քահանայս 'ի սպասու
կալ ս̅բ̅ նշանին։ Եւ կարգեց վահան
զի իշխանն արջուց տացէ ամ յամէ
վեց հազար դրամ. զի խրատ լիցի, և
մի այլ ոք արասցէ նոյնպէս։
Եւ զայս պատմութի̅ դրեալ եդին 'ի
վանսն ծիծառնէոյ. զի ընթերցցի և
ծանիցին եղեալ իրքն։
Յորում էր թըւականն հայոց ՃԼ.
իսկ հոռոմին չորս հարիւր ի̅ և է̅։
Ժ ԳԸ Ր.ռ

Ա՛ռ որ կրկին օրինակեալ եդին 'ի
վանսն գլակայ, հրամանաւ հայրապե
տին տ̄ն ներսէսի ։ որ քսան երորդ է 'ի
պալհաւեանն գրիգորէ՝ և վահան ե
բեսներորդ երկրորդ 'ի մամիկոնեանն
մուշեղէ ։ Սա եկաց իշխան 'ի տարօն
ամս երեսուն. և տասն ամ 'ի մարզ
պանութ̄ն. և փոխեցաւ առ ըղձալին
իւր բարեպաշտ ընթացիւք, 'ի փառս
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ" ։

✠

Յիշատակարան տ̄ն յօհաննու եպիս
կոպոսի մամիկոնէից տանն. Ժողովողի
պատմութ̄ն 'ի միում տեղւոջ ։ 3

Ընդ ամս ժամանակաց գրիգորի
մերոյ լուսաւորչին՝ գրեալ մե
ծին զենոբայ ասորւոյ զոմանս
եղեալս դնէր 'ի վանս գլակայ, լինիլ
ծանուցիչ իրաց անցելոց որոց զկնի
գայցեն ։ Օ՛ որ բարւոք համարեալ
զկնիքն՝ զնոյն կերպ և ինքեանք առ
Ժ ԳԴ նէին.

նէին. գրելով զոր ինչ յիւրեանց ժա
մանակին զքաջութի՞ իշխանացն Հայոց
'ի վերայ եկեղեցւոյն։ Եւ այնպէս ա
ճեալ կարգ պատմութեանն՝ անհա
նիւր ասորւոց պատմութի՞. զի նորքն
այնք որոց գրեցան անհանքն՝ մինչ 'ի
Թոդիկ ասորիքէին. և տունն այն նո
ցին գրովքն վարժեին։ Իսկ նա փո
խեաց զկարգ նոցին և վերժեաց զա
սորիսն։ Այլ թէ որ ինչ գործեցաւ
'ի տանս մամիկոնէից 'ի տրդատայ մինչ
'ի խոսրով՝ ոչ գտի ուրեք։ և յետ
բազում խնդրոյ և որոնման՝ լըհայ
թէ է կրօնաւորմի 'ի խորին ուրհա
մարմառա՛ անուն. և ունի լիով զոր
խնդրեմս։ և երթեալ առնա՛ մեծաւ
փափագմամբ գտի 'ի նմա՛ գիրքմի հին,
գրեցեալ 'ի յիննակնեան վանսն. և ան
կեալ անդ 'ի զօրացն պարսից որք ա
հերեցին զերկիրս Հայոց, և աւարեալ
գերեցին զսրբութի՞սն։ Եւ թարգ
մանեցի 'ի նմանէ ի՞ և ը՞ պատճէն պատ
մութեան. կայրև յիս տասն պատճէն

յառաջնմէ • և բերեալ 'ի մի զբնաւն
որ էր երեսուն և ութ պատճէն , զը
րեալ 'ի գրի իմով ձեռամբ թողի յի
շատակ մանկանց սիօնի • յամս հերակ
լեայ յունաց արքային և 'ի սպանմանն
խոսրովու ։ հրամանաւ տ̄ն ներսէսի
հայոց հայրապետի ։ և յիշխանութ̄ե
հայոց վահանայ մեծի մամիկոնեան
զօրավարի • զոր մայրենի անւամբ
կամսարական կոչէին • որ էր 'ի մուշե
ղայ երեսներ̄դ երկրր̄դ իշխան տանս
հայոց ։ Արդ գրեցի զսա և կազմեցի
'ի դրան տաճարի սբ̄յ կարապետին •
որոյ և նշխարքն է 'ի նոյն տեղին որ բե
ւեռոմն յայտնի լինի ։ և թողի յիշա
տակ ինձ և իմոցն • զի անմոռաց լիցի
յիշատակ իրացն եղելոց ։ ես տէր յօ
հաննէս եպիսկոպոս տանն մամիկո
նէից • որ երեսներ̄դ հինգերորդ եմ
'ի զենոբայ • 'ի չորրորդ ամսոջ հայրա
պետութ̄ե սրբոյն էջմիածնի տեառն
սամուէլի ։ Արդ որ ինչ ղկնի մեր գոր
ծիցին 'ի մամիկոնէից տանս՝ գրեալ

դիցեն 'ի սմա եկեալքն զկնի ։ զի այս
պէս ընկալաք պատճէր 'ի հարցն գրել
զանճանս նախնեացն և զարարս նոցա
զի մի՛ մոռացեալ լինիցին ։ Եւ խընդ
րեմ 'ի ձէնջ ես յօհաննէս եպիսկ՝պսս
զի մի՛ ծաղր թվիցին ձեզ բանքս · այլ
զսակաւ պատճէնս իմ գրեսջիք ընդ
այլ գրելոցդ 'ի սմա և որք այս՝պս առ
նիցէք օրհնեսջիք 'ի սրբոյն ամլորդւոյ
և 'ի ք՝է յէ · գրօղքդ և ընթերցօղքն 'ի
միասին վարձատրեսջիք ։ Իսկ թէ թե
րի մտօք կալցին զշարադրեալս՝ թերի
և ինքեանք ընկալցին զվարձսն · իբր
զնախանձոտ թագուցողին, որ 'ի տ՝է
առակի ։ Եւ որք լիով ընկալցին՝ 'ի
ք՝է օրհնեալք լիցին ։ զի զհրամանս
առաջնորդաց յօժարապէս յանձին
կալնուն ։ Եւ որք զանուն յիշատա
կին ջընջել կամիցին 'ի գրոցս՝ ինքեանք
ևս նոյնպէս լիցին ։ Իսկ կատարօղք
բանից մերոց՝ օրհնեալք լիցին և
վարձատրեսցին 'ի ք՝է և 'ի մկրտչէ
նորին ։ Ամէն ։

ժէ ԺԴ ԳԻ

✠

Պիտել պարտէ ուսումնասիրաց. զի թէպէտ վերոյիշեցեալ այրն պատ
ճելի՝ Յոհաննէս եպիսկոպոսն մամ
կոնէից տանն՝ բազում աշխատութիւն
ժողովեաց այնքան պատճէնս, զորոց
յիշեաց զթիւն. սակայն յանհոգութիւն
զկնի եկելոցն որ ի քնէ է մեր սովո
րութիւն՝ աստ և անդ ցրճեցեալ՝
այսքանս գտանի այժմ առ ձեռն
պատրաստ. զոր ընկալեալ
գոհասջիք զտէ:

✠

✠

Ա՛ռ ս՛բն Յօհաննէս մեծն 'ի մարգա
րէս • պաղտասար պարտաւոր
գպրի ասացեալ։

Ա՛բ յօհաննէս գեր հրաշա կան.
անձառ շնորհին ընդունա րան.
և արուսեակ իմանա լի.
արեգականն արդարու թեան։
Ը՛ւետաբեր գոչմամբ ձայ նին.
վերնոց զօրաց դասապե տին.
քարոզեցար զաքա րիայ.
մինչ խընկարկեր 'ի տաճա րին։
Ա՛բ յօհաննէս բոյս բաղձա լի.
'ի վայելուչ ժամանա կի.
ներ արգանտի ամուլ ծե րոյն.
տընկեցար տունկդ երանե լի։
Ը՛ւ խայտալով իսկ անդըս տին.
'ի յարգանտ եղիսաբե թին.
ծանեար զօծեալ փրկիչն ա՛ծ.
'ի յորովայն մաքուր կու սին։
Ա՛բ յօհաննէս նախատե սող.
մարգարէից գերազան ցող.

ԺԹ

յորովայնէ 'ի յորո վայն.
ա̅ծորդւոյն երկրպա գօղ:
Յանդաստանէ անբեր երկ րին.
մաքուր դըստերն ահարօ նին.
ծընար ծաղիկդ երփնագե ղեալ.
'ի սահմանեալ ժամանա կին:
Սբ̅ յօհաննէս յոյժ գերա գոյն.
հուպ հանապազ անեղծ լու սոյն.
ըստ մաղաքեայ ձայնին ե ղեր.
առաջ ընթաց ա̅ծոր դւոյն:
Զաքարիաս որ հիա նայր.
յոչ հաւատալն և համրա նայր.
յորժամ ծընար տատրակդ ան բիծ.
օրհնէր զա̅ծ և զւարճա նայր:
Սբ̅ յօհաննէս ակն աննը ման.
'ի մարմնայինս անմարմնա կան.
յափշտակեալ 'ի հրեշտա կաց.
'ի յանապատ անդորրա կան:
Գերաճաճանչ ոսկիդ ըն տիր.
և մարգարիտըդ լուսա կիր.
'ի համազգեաց մեկուսա ցեալ.
ընդ անարեանցըն հրճ ւէիր:
Սբ̅ յօհաննէս թագ ակնա շար.

Ի վե

վերին շնորհին մատակա բար.
ըստ հին և նոր պատճիրա նաց.
մեղը և մարախ կերակրե ցար:
Սբ̄ յօհաննէս հոգւով մաք բեալ.
և ոչ մարմնով պրճնազար դեալ.
այլ'ի ստեւոյ ուղտու հան դերձ.
մարմնոյդ ծածկոյթ հերիք վար կ̄ել:
Սբ̄ յօհաննէս նըշոյլ ան շէջ.
և հայելի պայծառ շող էջ.
'ի յօրինակ արիու թեան.
գօտի մաշկեայ արկեալ ընդ մէջ:
